



9(91.542)  
36 - 62







9(91542) 36-62 1988  
2232 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒՄ  
ԳԵՂԱՔՈՒԹԵԱՆ

593-ԾՀ

## ՀԵՅԱՑ:

ՊԱԽՆԱՇԱԿԵՐՏԱՅ ՈՒՍՈՒ ՄՆԵՐՄՆԱՅ:

աշխատասիրեաց

97

ՈԽՈՎՈՎ ՅԱՐՈՒԹիւնեան Երջնիւանց:

(յաշխատահարաբէ ՚ի գըտեառ ։)

ՏՊԱԳԻԵԱԼ,

Հաւանութեամբ արժանընտիր թեմակալ Աքքեպիսւ  
կոսկոսի Հայոց Արաստանի և գաղթելոց ՚ի Տայս  
Տեառն ԿԵՐԱՊԵՏԻ և Ասպետի:

Դ ՏՓԽԻԱԼ.

Դ Տպագրատան Հողեար Ճեմարանի Հայոց ընծայելոյ յաղնուց  
կան Գիորդայ Արձունուց:

9(47.925)

333

Գրերադոյն պարզեւ մատուցեալ հայրենեաց,  
Ե աշխատասիրութիւնն, որ ունիցի վնալատակ  
լուսաւօրութեան մանկանց:

Արքէբոն.

## ՅԱՅԱԿԱՐԱՆ

Մարդ բանական՝ ըստ ածապարզեւ ձրից մտաւոք  
տրամախուհութեան անմահից նա թէ նոյն իսկ Արար-  
չապետին արժանի գտեալ նմանակցութեան, անդա-  
դար ճգնի յանցուկ սահմանի իւրաց կարձօրեայ կե-  
նաց բովանդակել ՚ի միտս զամենայն անցս աշխարհի,  
զանցեալը ։ զներիայս, և եթէ հնար ինչ իցէ ևս և  
զապագայս. առկայն արարչին բնութեան զվերջնն պա-  
հեալ իւրում ամենապարզ էութեան, զառաջնոցն գի-  
տութիւն պարգևեաց իւրաքանչեւք ազգի և ժողովրդեան,  
մանաւանդ այնոցիկ որք բարգաւաճեալ ծաղկեցուցին  
զաստուածաւուր զայն ձիրս անխոնջ աշխատութեամբ  
վորժեալ զանձինս ՚ի մարզս ուսմանց և կենցազօդուու-  
արուեստից :

Գօդուու և զշահ պատմութեամն բազումք բազմ-  
օրինակ զրուատեօք երկնաշափ բարձրացուցեալ հե-  
տեւեցան ուսանիլ և ուսուցանել. ոմանքը միմիայն ՚ի  
զբոսանու ահծանց ումոնք յանմահացուցանել զյիշատակս  
իւրեանց գիւցազանց, և ոյլը բազումք յանհամար հար-  
կադրեալ ՚ի կրից և ՚ի պատճառանաց, ոչի ստկաւք  
ոմանքը ճկնեցան նովիմք ՚ի տեսիլ հանել զամենաս-  
քանչ զօրութիւն Արարչին, և զվարչութիւն նորա ՚ի  
տիեզերս, որովք և աղդել յընթերցօղս զսուրբ և զա-  
ռարինի զդացմանս՝ օրինակաւ անցելոց հեռանալ ՚ի  
չարեաց և հետեւիլ բարեաց. և այս իսկ է և պարտի  
լինել վերջն և միմիայն նպատակ ճշմարտապատում  
վերասանիք.

Յայնոցիկ պատճառանաց պոխպեալ ամ ազգը  
նաև խուժադուժ բարբարոսք զամենայն անցս ազգի և  
հայրենեաց իւրեանց (թէ և յանշափս շռայլեալ յա-  
ռասպելս քանի ՚ի ճշմարտապատում վիպս) առաջե-  
ցին զրուլ հետագայից իւրեանց՝ և ոչ յարձանս և ՚ի  
վեմս զրումեալ, և զի ՚ի ըիրազս և ՚ի պապիր զնոյն  
պետքեալ, և ՚ի վերջոց յընդարձակ պապարէդ մա-  
գալաթից և թվուոց չնոյն ամփոփեալ :

Ա, երեսցի ինձ յանդգնութետմբ ասել, թէ դասագլուխ Ուաւենագիրք ազգի մերօյ զերագոյն քամ զամնեսին գտեալ 'ի ճշմարիտ նպատակ արդարակորով Պատմաբանի, 'ի բաղրմ մատեանս ամիտիեալ աւանդեցին մեղ զՃգրիտ Պատմութիւն ազգի մերոյ, ոմանը զիւրեանց ժամանակին և եթ, և ոմանը սկիզբն առեալ 'ի նախահաւեն մարդկութեանս : Ի՞նդ յաճախել յարգի ուսուման պատմութեան և ը ծանօթանալ օդտի նորա ամենեցուն՝ ազգը Կուրոպիոյ 'ի զանազան մատեանս ամիտիեալ զպատմուկան վէսկս ամենայն ազդաց տպագրութեամբ ընծայեցին 'ի լոյս, մինչեւ 'ի ներկայ դարուս նախապատուեալ զնոյն քան զայլ ուսումնական մատեանս, 'ի ձեւ դպրոցական յօրինեալ զպատմութիւն նախ զհայրենի ազգին և ապա զընդհանուր աշխարհի՝ աւանդեցին ուսուցանել աշակերտաց յամենայն ուսումնարանս ը այլոց աշխարհաօգուտ գիտութեանց և արուեստից : Եւ զի մի յոյսմ պակաս գըտանիցի ուսումնատենչ մանկատին Հայացի, արժանայիշատակ Կոփերմ Ա : Եւթեան 'ի միւրանութենէ միսիթարեան ամիտիեալ զպատմութիւն ազգիս 'ի համառօտ մատեան յաշխարհիկ բարբառ մատոյց տպագրութեամբ 'ի լոյս 'ի 1839 ամի.

Ա. յլ ստրջանը ինձ, զի այս բաղմաշահ մատեան՝ 'ի մանկանց հայրենի ազգի իմոյ ընակելոց յԱրևելեան Հայաստանի մնաց 'իսպառ անհասկանալի, ը անծանօթ գոլոյ նոցա աշխարհիկ բարբառոյ Հայոց յԱրմատեան աշխարհս պանդխտելոց : Ուստի առ 'ի գիւսալուր առնել ամենեցուն զայս համառօտ Պատմութիւն ազգի մերոյ, յօրինեալ յո՞ւ գպրոցական և առ 'ի ուսուցանել զնոյն մանկանց Ուսումնարանաց Հայաստանի փոխեալ 'ի լեզու գլաբառ մատուցանեմ : 'ի վայելո ուշիմամիտ մանկանց ազգիս, յուսացեալ անդրդուելի թէ գէթ յիշատակ ազգին յորդոր լցից հայրենասիւրաց ակամբ հայիլ յայս իմ գուզնաքեայ վաստակ . և այն բաւ է ինձ 'ի վարձ անդրսնիկ իմոց աշխատասիրութեանց :

# ՏԵՂԵԿՈՒԹԵՒՆ

**Յաղագո պատմութեան հայոց:**

§ Ա.

**Հ.** Ա ասն է՞ր ազգ մեր կոչի Հայ։  
**Պ.** Արավշետե առաջին՝ Նահապեան՝ որ տիրեաց ազգե  
 մերում Հայկ կոչեւր. ուստի և յանուն նորա ազգ  
 մեր կոչեցաւ Հայ. Իսկ օտար ազգք զմեզ Երմէնի կամ  
 Արմենիա կոչեն յանուն նահապեալին մերոյ Աբամայ.  
 որ քաջութեամբ իւրով երեելի եղեւ տռաջի այլոց. Ուս-  
 տի և զանուն երկին՝ ուր բնակին Հայք, օտարք կո-  
 չեն Երմէնիոտան կամ Արմենիա, այլ մեք Հայաստան։  
**Հ.** Յոբում գարու եղեւ սկիզբն ազգի մերում։

**Պ.** Օ հնի գաղաքելոյ ջրհեղեղին ազգ մեր համարի 2342  
 սկզբնաւորեալ՝ ի Այ նահապեաէ, քանզի նախ Այ  
 սկիզբն արար ծաղկեցուցանել և բարդաւաճել զՀայ-  
 աստան, Յորժամ այլ ազգք չու արարեալ՝ ի Հայ-  
 աստանէ՝ գնացին՝ ի Բարելոն ընել զաշտարակն, 2243  
 բնակիչք Հայաստանի զհետ եղեն ծաղկեցուցանել  
 դերկիր իւրեանց. սոքա էին մի մասն յորդոց Յարե-  
 թի՝ ուստի և ազգ մեր կոչեցաւ և Յարեթեան. Իսկ  
 յայնժամ կոչեցաւ Հայ. Երբ ազգապեան մեր Հայկ  
 վերստին գարձեալ՝ ի Հայաստան եկն առ ազգականս  
 իւր, և սկսաւ միայնակ իշխել՝ ի վերսյ Հայաստանի՝  
 հոգ տարեալ պաշտպանել զնոյն՝ ի թշնամեաց. ուստի  
 առաջին դլուխ և հոգացող ազգի մերոյ Ճանաչեմք զնաւ։

Ժամանակ տիրապետութեան Հայկայ է այն ա-  
 ռաջին գարն, յորում հին ազգը Ասիոյ սկսան գալ  
 յերեան. Ուստի եթէ այլ ազգք առ՝ ի հնացուցանել  
 զսկզբնաւորութիւն ազգի իւրեանց ապաստան լինին  
 յառասպելու. մեք առանց առասպելաբանութեանց կա-  
 րեմը յայտնի ցուցանել թէ ազգ մեր սկզբնաւորեալ  
 է՝ ի Այ նահապեաէ, և՝ ի ժամանակս սկսանէլոյ այ-  
 լոց՝ մերն վերանորոգեալ է՝ ի Հայկայ։

2107 Այսպիս և 'ի մասին ըարեկարգութեան զկնիջոհեղեց  
զին առաջին կորեմք առել զաղգ մեր՝ քանդի երբ այլ  
աղղք տառ և անդ ցրուեալ զտեղի բնակութեան որու-

2229 նէցն . բնակիչք Հայաստանի անվրդով կացեալ մաս-  
ցեալ 'ի տեղիս իւրեանց զուն գործէին ծաղկեցուցա-  
նել և գորդարել զախարհ իւրեանց :

Հ. Առաջի յայտնի է Ամսաբառութիւն Պատմու-  
թեան Հայոց :

Պ. Առակին Պատմաբանը 'ի գրելն զպատմութիւնն  
առասպելիք զարդարեին դնոյն , զի Հաճոյ Թաւեացի  
ժողովուզեանն . ուսաի և հին պատմութիւնն անխօսուն  
յու առայելեայ՝ միմիայն ուշ եղեալ Հարկաւոր պատ-  
մութեանց յայտնի նշան էը անգարդութեան : Արակիս  
յոյու է և 'ի յօրինուածոյ պատմութեան մերոյ . քան-  
զի Առարջակ ոքայ կամեցաւ գիտել թէ որպիսի՞ և  
ուսի՞ իցէ ծագունն աղդի Հայոց , առարեազգ Վարի-  
քան Վարին առ 'ի գտանել զ Պատմութիւն Հայոց  
'ի գրաւանն Վինուեի . ուրմիծն Վաղեսանդը ժողովեալ  
զպատմութիւնն և զբիշատակու համօրեն աղդաց Հրա-  
մայեալ էր պահպանել . արում չքր փաթ գովել կամ  
պարասանել զ Հայու : Եւ Վարիբաս ըստում էր Վարի ,  
ամենին չն չունեց զարթի խօսիլ զսուա . կամ զ ովա-  
րանել զ Հայու , իսկ Եղէ Առարջակ իցեր Հայու , յայն-  
մայթ մարթ էր կործել թէ յաշագու հաճոյ թուելոյ  
նուն և սիրելի ընթիւ , խոսնեալ իցէ Վարիբասոյ  
զսութիւն և զտուապեկ ըստութեան մերոյ : Վա-  
նուանդ երկնչը բայել զբանս սուստու , չկ մի սոստի գը-  
րելց իւրց երեկոցի յապայն 'ի պատմութեանց եղե-  
լոց 'ի մէջ տղթին:

Հ. Առաջի տեսաց Տերութիւն աղդի Հայոց :

Պ. Արի սկսեալ 'ի Եղ նոհապետէ մինչև ցդարձ  
Հայեայ 'ի Հայուստան՝ բնակիչք Հայաստանի գրեթէ  
ոչու ուն կառավարեին ՏԱՅԱՏՏԵՐԱՎԱՆՆ ԼԵՎԱՌԻ-  
ԹԵԱՄՅԻ զի իւրաքմչիւ բար զտուն և զբնակուի իւր իշխա-  
նաբար կռապալարէր : Հետ այնորէկ յօրժամ եկն Հայէ  
'ի Հայուստան , և իշխաց 'ի մէջ ամենեցուն սկսու ԻՇ-  
ԽԱՅԵԹՈՒՆ ՀԱՅԱՎԱՐԱՅՅՈՐ որ է ակիդն պատմուե

Հայոց, և այս իշխանութիւն տեսեաց ցժու մահակո Ալա-  
հեկ զամս իրը 1779. Օչինի մահուան Ալահեկ զամս  
իրը 180 Հայք մնացին առանց իշխանի հնագանդեալ  
միայն մեծին Աղեքսանդրի և Յաջորդաց նորա:

Երկրորդ իշխանութիւն Հայոց՝ որ և կոչն իշ-  
խանութիւն Արշավարձնեալ, սկսեալ՝ ի Ալա-  
գարշակայ մեծէ տեսեաց զամս 58. մինչև ցըստուշիր:  
Օչինի աքսորման սորտ մնացին առանց թագաւորի  
զամս 456. և նախ հպատակեալ Պապսից կառավարե-  
ցան Մարզպանոք, և ապա անկեալ ք իշխանութեամբ  
Կարբացւոց Ռոտիկանու և եթ կառավարէին:

Երրորդ իշխանութիւն Հայոց՝ կոչեցեալ Թագավոր-  
ութիւն Բագրատունեալ, սկսեալ՝ ի մեծէն Ալա-  
գայ տեսեաց զամս իրը 196. մինչև ցԳագիկ վերջին. յետ  
մահուան նորտ զամս 36 մնացին առանց թագաւորի:

Չորրորդ իշխանութիւն Հայոց՝ որ կոչն Թագավո-  
րութիւն Ունիթինեալ, սկսեալ՝ ի Ռուբենաց  
Ա. տեսեաց զամս 295 մինչև ցըմբանումն վերջին լեռնի.  
աստի մինչև ցայսօր 468 տարիէ, որ ք իշխանութեամբ  
պեսպէս թագաւորաց կան և մնան Հայք առանց Հայք  
կազն թագաւորին:

'Ի Հայկաց սկսեալ մինչև ցայսօր ըստ Թուոյ  
Ժամանակագրաց 3904 ամք թուին, իսկ ք Կոթա-  
նասնից 4104:

Բատ կարգի այսոցիկ չորիք իշխանութեանց մեք  
ևս զայս Համառօտութիւն՝ ի չորս մասունս բաժա-  
նեմք, յաւելեալ զկարեար գիտելիս՝ ի վախճան ամե-  
նայն մասանց:

¶ It is evident that such a name was given to him by the  
Romans themselves. ¶ And in fact the <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14 says that  
they gave him this name because he was the author of  
such a name among them. ¶ And so it is written in the <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14.  
¶ And so we see that such a name was given to him by the  
Romans themselves.

¶ And in <sup>the</sup> <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14 it is written that the Romans  
gave him this name because he was the author of such a name among  
them. And so it is written in the <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14. ¶ And  
so it is evident that such a name was given to him by the  
Romans themselves. ¶ And so it is written in the <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14.  
¶ And so it is evident that such a name was given to him by the  
Romans themselves.

¶ And in <sup>the</sup> <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14 it is written that the Romans  
gave him this name because he was the author of such a name among  
them. And so it is written in the <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14. ¶ And  
so it is evident that such a name was given to him by the  
Romans themselves. ¶ And so it is written in the <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14.  
¶ And so it is evident that such a name was given to him by the  
Romans themselves.

¶ And in <sup>the</sup> <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14 it is written that the Romans  
gave him this name because he was the author of such a name among  
them. And so it is written in the <sup>Book</sup> of <sup>the</sup> Acts 12:14. ¶ And  
so it is evident that such a name was given to him by the  
Romans themselves.

# ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՑ.



## ՄԱՍՆ ԵՐԱԿԱՆԻՒՆ

ԽԵԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱԱԶԱՑ.

\*\*\*\*\*

§ Բ.

ԱՆԴ.

Հ. Ողջ էր հայկ, և զիարդ եղեն նա նախահայր  
աղքի մերոյ.

Պ հայկ էր տռաջին նահապետ աղքի մերոյ, Ծոռն  
թռառն Երայի. այսինքն Երայնաւ զ Յարեթ, Յարեթ  
ծնաւ զ Գամեր. Գամեր ծնաւ զ թարգոմ, թարգոմ  
ծնաւ զ հայկ\*. Այս հայկ՝ ի չուել քաջարի արանց  
՚ի հայաստանէ ՚ի պատճառս աշտարակաշնութեան,  
զնաց լը նոսա ՚ի Յարելն. իսկ ՚ի կործանիլ անդ  
աշտարակին վերստին ցիրեցան եղեն գնացեալքն. Ծէլ  
(որ և կոչվ ՚երբովթ) ցանկայր յայնժամ միապետել  
՚ի վերայ ամենեցուն, և յամենից պաշիլ իրսե զԱս-  
տուած. Չայս լուեալ հայկայ որտուտեալ երեք հա-  
րիւր քաջ ընկերօր, ամենայն ընտանեօր և աղևիւք իւ-  
րովք վերստին դարձ արարեալ եկն. ՚ի հայաստան ՚ի 2107  
գաւառը ՚ըարատասայ. ՚նդ շն եաց հայկ զտուն ըր-  
նակութեան կալուածոց, և ետ ՚ի ժառանգութիւն  
կագմեայ Ծոռին իւրոյ, և ինքն խաղաց այլովք աղ-  
խիւքն յԱմեմաւտս հիւսիսոյ, և սկսաւ սահմանել

\* Խորենացին յարտագին հեղինակաց տուեալ զի՞ն Գառերայ  
յաւելու և զ թակրոս:

Ա Ն Ա Ք Պ կ ա ր գ ե ւ և զ կ ա ն ո ն ՚ի մ է ջ բ ն ա կ ս ա ց Հ ա յ ա ս տ ա ն ի . զ ի մ ի  
և յ ր ու ե ս ց ի ն և կ ո ր ու ս ց ե ն վ ի ս ա ղ ա ղ ու թ ի ւ ն և զ լ ե-  
զ ու ն . զ ո ր ու ն ի ն ի ն , ի ն ի ն և ս վ ե ր ս տ ի ն ու ս ա ւ վ ի ս ա խ ն ի լ ե-  
2106 զ ու ն՝ զ ո ր կ ո ր ո յ ս . Ա ն դ ՚ի մ ե ր ձ ա կ ա յ ս Բ ա ր ա տ ա յ շ ն ե ա ց զ ք ա ղ ա ք , և ա ն ու ա ն ե ա ց յ ի ւ ր ո յ կ ո չ ե ա ց Հ ա յ ի ո ւ ց ն .  
և զ ա ն ու ն ը ն ա կ ե ա լ դ ա ւ ա ռ ի ի ւ ր ո յ կ ո չ ե ա ց Հ ա յ ի .  
Հ . Օ լ ո ն չ ա ր ա ր Բ ա կ լ յ ո ր ժ ա մ լ ո ւ ա ւ զ ա պ ս տ ա մ լ  
բ ո ւ թ ի ւ ն Հ ա յ կ ա յ :

Պ . Բ ա ր կ ա ց ե ա լ ը ն դ ն ո ր ա յ ն ա պ ս տ ա մ բ ո ւ թ ի ւ ն ,  
ի ս կ ո յ ն զ գ ե ա պ ա ն ս ա ռ ա ք ե ա ց ա ռ Հ ա յ կ՝ զ ի դ ա ր ձ ց ի յ ե տ ա ս ՚ի հ ն ա զ ա ն դ ո ւ թ ի ւ ն ն ո ր ա , ա պ ա թ է ո չ ա ն ն ձ ա մ բ  
ա ս է գ ի մ ե ա լ պ ա տ ե ր ա զ մ ա ռ ՚ի վ ե ր ա յ ք ո ա ն ի ն ա յ ա մ ե-  
ն ա յ ն տ ա մ բ ք ո վ ջ ն ջ ե ց ի ց ՚ի ս պ ա ռ . Բ ա յ ց ի բ ր ե Հ ա յ կ  
ո չ հ ա մ ե ա լ ը ն դ բ ա ն ս ն ո ր ա խ ս տ ո ւ թ ե ա մ բ պ ա տ ա ս խ ա-  
ն ե ա ց , ս ր տ մ տ ե ա լ Բ ա կ լ ա յ ա ն թ ի ւ զ օ ր չ ք գ ի մ ե ա ց ՚ի վ ե-  
ր ա յ Հ ա յ կ ա յ : Հ ա յ կ վ ի ս խ ա ն ս ա կ ե ր կ ի ն չ ե լ ո յ ա մ ա պ ա ղ ե ա լ  
հ ա ւ ա ր ե ա ց ա ռ ի ն ի ն զ ա ր ս ք ա ջ ս . Ե լ ը ն դ դ է մ ն ո ր ա , և  
հ ա ս ե ա լ յ ե զ զ ծ ո վ ո ւ ն Ա ա ն ա յ ՚ի յ ա ր մ ա ր ա ւ ո ր դ ա շ տ ի  
ս պ ա ս է ր գ ա լ ս տ ե ա ն թ շ ն ա մ ե ա յ ն . Բ ա կ լ հ ի ա ց ե ա լ ը ա յ ս  
հ ա մ ա ր ձ ա կ ո ւ թ ի ւ ն Հ ա յ կ ա յ ս ա կ ա ւ զ օ ր օ ք յ ա ռ ա ջ է ա ն ց  
ա ռ ՚ի տ ե ս ա ն ե լ թ է Հ ա յ կ յ ի ն չ ի ց է տ պ ա ս տ ա ն , և  
ի ն ի ն ի ն հ ա մ ո զ ե ս ց է զ ն ա ՚ի հ ն ա զ ա ն դ ո ւ թ ի ւ ն . Յ ո ր ժ ա մ  
ե տ ե ս Հ ա յ կ թ է Բ ա կ լ մ ի ա յ ն զ ա յ ը ն դ ա ռ ա ջ ք ա ջ ա լ ե-  
ր ե ա ց զ ա ն յ ա ղ թ զ օ ր ս ի ւ ր , զ ի ա ր ի ա ր ա ր յ ա ր ձ ա կ ե ա լ ՚ի  
վ ե ր ա յ Բ ա կ լ ա յ , և մ ի ա ն դ ա մ ա յ ն ը ն դ զ օ ր ս ն ո ր ա մ ա ր տ ո ւ-  
ց ե ա լ կ ա մ յ ա ր ջ ե ս ց ի ն կ ա մ զ փ ս ո ս յ ա ր ջ ա ն ա կ ի  
տ ա ր ց ե ն . և զ ա յ ս ա ս ա դ ե ա լ շ տ ա պ ա ւ վ ա ղ ե ա ց ը ն դ ա-  
ռ ա ջ : Օ ա ր հ ո ւ ր ե ա լ Բ ա կ լ ա յ վ ե ր ջ ո տ ն ե ա լ կ ա մ է ր ե լ ա-  
ն ե լ ՚ի ն ո յ ն բ լ ո ւ ր ո ւ ս տ ի է ց ն , բ ա յ ց ո չ ե գ ի տ զ ժ ա մ  
պ ա ր ա պ ո յ : Օ ա յ ն ի մ ա ց ե ա լ Հ ա յ կ ա յ պ ի ն դ ք ա ր շ ե ա ց  
զ ա լ ե ղ ն , գ ի պ ե ց ո յ ց զ ե ր ե ք թ ե ե ա ն ն ե տ ե ն ը ն դ տ ա խ ս ա կ  
կ ր ձ ո ց ն Բ ա կ լ ա յ , ո ր շ ե շ տ ը ն դ մ է ջ թ ի կ ա ն ց ն թ ա փ ա ն-  
ց ի կ լ ե ա լ ա ն կ ա ն ի յ ե ր կ ի ր . Ա ն կ ա ւ Բ ա կ լ , փ չ ե ա ց զ-  
2104 է ի ն , զ օ ր է ն դ ա ր ձ ա ն ՚ի փ ա խ ո ւ ս տ , և ա շ խ ա ր հ մ ե ր ա-  
զ ա տ ե ց ա ւ ՚ի ձ ե ռ ա յ շ բ ո ն ա ւ ո ր ի , ո ր զ մ ւ ն գ ո ր ձ է ր ջ ը ն-  
ջ ե լ զ ա ս տ ո ւ ա ծ ա պ ա շ տ ո ւ թ ի ւ ն ն , և զ ա ն ձ ն ի ւ ր ա ս տ ո ւ ա-  
ծ ա ց ո ւ ց ա ն ե լ Հ ա մ ա յ ե ա յ Հ ա յ կ պ ա մ ա յ ե ա լ զ գ ի ա կ ի

Ինչըս գեղովիք, տանել՝ ի հարք և թաղել՝ ի բարձր  
բաւանդակ տեղւոջ՝ ի տեսիլ կանանց և որդւոց իւ-  
րց, որպէս զի որք զայս՝ ի վեր ամբարձեալ տեսցեն  
՚ մի կողմն զտապահ՝ Եղի՛ ՚ ի յուշ ածցեն զպատիժս  
և անօրէնուե մարդկան, և ՚ ի միւս կողմն հայելով  
ի միտ բերցեն զծայբագոյն ախտս փառասիրութեան  
Հպարտութեան։

Հ. Օ՞՞նչ երեկելի գործ գործեաց հայկ։

Պ. Հայկ՝ յորժամ ետես, զի յաջողութեամբ վախ-  
չան եղեւ մարտին, նախ ՚ ի տեղի ճակատուն՝ ուր մար-  
ուեաւ լե Բնէլսյ, շննեաց քաղաք, և անուն կրցեաց  
մա Հարք և գաւառն այն այժմ անուանի Հայոց  
նոց։ Խակ զբլուրն՝ ուր քաջամարտիօքն անկաւ Բնէլ  
մնուանեաց գերեզմանիք։ Վ. յսպէս մեծաւ յաղթանա-  
խաւ Հայկ գարձաւ ՚ ի Հարք գաւառ, ուր շննեաց  
լրազում քաղաքս և կարգեաց զկանոնս և զնօքանոր կար-  
ես։ Ապա յետ տիրապետելոյ խաղաղութեամբ զամն  
իդս յանձն արար զտէրութիւն իւր որդւոյ եւրում  
Հրմենակայ և ՚ ի հասակի 400 ամաց մեռաւ։

2027

### Տ Գ.

Հ. Օ՞՞նչ պատմի զԱրմենակայ։

Պ. Արմենակ որդի Հայկայ յանկացեալ ծաղկե-  
բուցաել զաշնարհս Հայաստանի, յանձնեաց երկուց  
ողբարձ իւրոց Խոռայ և Վանաւագայ զՀարք գաւառ։  
և ինքն առեալ զամենայն բազմութիւն իւր խաղաց  
Ճրեւել Հիւսիսոյ, ՚ ի մեծ գաշտավայրի ուրեք ա-  
րար զինութիւնս ։ անդ տնկեաց զանտառս Խօսեաց,  
և զմերձաց լեառն անուանեաց Վրագած։ խկ ՚ ի  
ստորոտ լեին շննեալ քաղաք կոչեաց Վրագածոտն և 2022  
յետ հաստատելոյ զայլ քաղաքական կարգադրութիւնս,  
գասակարգեց ես և զբաժանմունս ժամանակին ՚ ի  
ձեռն իմաստոց Վոկաց գաւառի։ ՚ ի վերջին ա-  
ւուրս իշխանութեան Վրամենակայ՝ Եղինահապետ հա-  
սեալ ՚ ի խորին հերութիւն վախճանեցաւ ՚ ի հասակի  
950 ամաց, և թուեցաւ ՚ ի բարձր լեառն Վպատհան-

գեպ Մասեաց, որպէս 'ի կենդանութեան իւրում պատուիրեալ էր: Խոկ զկին Կոյի՛ որ կոչեւը Կոյեմզարա թաղեցին 'ի Մարանդ գաւառի: Արմենակ յեղ վարելոյ զեշլամութիւն իւր զամս յոլովս յանձն արար դժիբապետութիւնն որդւոյ իւրում Արամայիսայ:

Հ. Օ ի՞նչ գիտելիք գոն վասն Արամայիսայ:

Պ. Արամայիս յետ յաջորդելոյ հօր իւրոյ եղթեալ զհետ մեծագործութեան 'ի դաշտի անդ Արտգածու շնեաց զամուր քաղաք կոփածց քարամբք, և անուանեաց յիւր անուն Արմատիք, որ եղեւ ապա մայրաբազուտէրութեան Հայկազմնոց: Եւ զգետն յանուն թուին իւրոյ Արամայիս կոչեաց Արամայիս:

Հ. Ո՞ւ էր Արար և զի՞նչ զնմանէ գիտելիք:

Պ. Արամայիս ունէր զօրդի մի Արարա անուն, ոյը շատակեր և յոլովածին վասն որոյ եանմա զարդաւանդ և զպտարեր զերկիք, ուր բնակեալ Արարոյի բազմացաւ, շնեաց քաղաք և զարդարեաց: ուստի գաւառն այն կոչեցաւ յանուն նորա Եփրակ: Աստի ել առապ պելեալ առակն այն, որ ասիւր առ շատակերս: “Եթէ քո Արայի որկորն է, մեր Եփրակայ ամբարքն չեն:, Արամոյիս կեցեալ 'ի նահապետութեան զանքառասուն մեռաւ, և յաջորդեաց նմա որդի իւր Ամասիա:

Հ. Օ ի՞նչ երեկի գործս արար Ամասիա:

Պ. Ամասիա ծնաւ զերիս որդիս — զԳելամ, զՓառոխ և զՅոլակ: Կամելովս սորա զի մի ծագեսցի 'ի մէջ որդւոց իւրոց խոսվութիւն ինչ, և մի զարտպորդութեամբ վարեսցին զկեամիս, առեալ զսսա լիւրին վասն Փառոխայ և Յոլակայ բաղաւմ ծախտք շնեաց զերկուս քաղաքս, հեռի 'ի միմեաց միօրեայ Ճանապարհաւ, և ետ զնոսա 'ի ժառանգութիւն երկուց որդւոց իւրոց արւոյն Փառոխայ և կոյտառին Յոլակայ, յորս բնակեալ նոցա յիւրեանց անսւն դաեղիսն կոչեցին Փառախոս և Յոլակերտ Խոկ Ամասիայ ամենայն կողմանս Արարատայ շնուարարեալ զանուն լերինն յիւր անուն կոչեաց Ամասիա և զգաւառն

Վասեաց ոտն: Եւ ինքն հանդերձ անդրամնկս ուն գեղամաւ գարձ արարեալ յԱրմաւիր յետ պս յազատելոյ զազդն զամս երեսուն և երկու մեռաւ զ ոհբոթին 1908 յանձնեալ Գեղամայ:

## § Դ.

Ն. Օ լո՞նչ պատմի զՊեղամայ:

Պ. Գեղամ զենի քանի մի ամաց կալոյ յԱրմաւիր յանձնեալ Հարմայ բգւոյ իւրում զայտազ սս ութիւն տպդին էտանց 'ի միւս կողմն Երարիայ և գ աշեալ 'ի Հիւսիսակոտմն Արեելից յեղը ծովուն Վեա աշ շննեաց շնու և զքաղաքս և զանուն երկրին կըշեաց Կեղոր 1900 քունի, յորմէ և մերձակայ ծովակն կոչեցաւ ու Պ. Գեղամայ: Աստ կացեալ սորա զժամանակ ինչ յանձն արար զտեղիսն զայնոսուիկ միւս որդւոյ իւրում Վիստ կայ, և ինքն գարձեալ յայնկոյս Երասխոյ 'ի մ ջ միոյ դաշտի շննեաց զքաղաքն Գեղամ, որ յետոյ անուն թռուին իւրոյ կոչեցաւ Գատանի: Աստ Գեղամ զպաւ զատեալ ընդ ամենայն ամս իրը յիսուն մեռաւ... Իսկ Վիստ կա կոչեր, ելից զահմանս իւր պէս պէս շնութ ետքիք և զդաւառսն կոչեաց յիւր անուն Վիստական, որ և կոչե Վինիք: Հետ ժամանակաց ընդարձակեալ սորա ըստ ահրութիւնն յայնկոյս կուր գետոյ մինչ յԱլասպից ծով, կոչեաց զայն աշխարհ յերկրորդ անուանէն Ազուանք: որ սպա եղեւ առանձին տէրութիւն:

Ն. Օ լո՞նչ երեելի գործս արար Հարմա:

Պ. Հարմա՝ զհետ երթեալ մեծազործութեան պատեաց ամուր և փառաւոր պարսպաւ զ Արմաւիր քազ, արար և զայլ քազում շնութիւնն 'ի քաղաքի անդ և արտաքոյ, տիրեալ յետ հօր իւրոյ զամս երեսուն և մի մեռաւ, թողեալ զմիապետութիւնն որ 1827 գւոյ իւրամ: Արամայ:

Ն. Օ լո՞նչ պատմի զԱրամայ:

Պ. Արամ: յոյժ երեելի եղեւ խոհեմութեամբ և քաջութեամբ: Դժամանակի սորա օտար աղքաք յամեւ

նայն կուռէ ոկուեալ էին մուտ առնել յաշխարհ մեր, և նեղել զնայս . Արամ ել ընդդէմ ամենեցուն և յաղթեալ նոցա 'ի բաց վանեաց ընդարձակելով ըդ Տէրութիւն իւր .

Մի 'ի գլասւոր թշնամեոց նորա էր Ահեքար իշխանն Արաց, որ 'ի ժամանակս Հարմեայ զմասն աշխարհի Հայոց ընդ հարկաւ կացուցեալ էր, Արամ յիսուն հաղար զօրքը 'ի դիմի հարեալ սատակեաց զջօրս նորա, և կալեալ զնոյն ինքն դիմուբար էած յԱրմաւիր, հրամայեաց ցից երկաթի վարել ընդ Ճակատ նորա և վարսէլ 'ի ծայր աշտարակին . իսկ զմասն աշխարհի նորա արար իւր հարկատուս :

Իսկ միւս թշնամի Արամայ էր Բարշամ իշխան Բարելոցւոց, որ քառասուն հաղար հետեակօր և հինգ հաղար հեծելազօրք յարձակեցաւ 'ի վերայ սորա : Արամ քաջարի զօրքը իւրովք դիմեաց 'ի վերայ նորա, հալածեալ ջարդեաց զջօրս թշնամւոյն և կալեալ ըդ Բարշամ սպան :

\* . Օ խանդ յաղթեաց Արամ զՊայաբիս իշխան . Պ. Պայաբիս ըւեեալ զքաջութիւնս Արամայ և երկուցեալ զի մի տիրեսցէ սահմանաց իւրոց, սաստիկ պատերազմաւ ել ընդդէմ նորա : Արամ 'ի վերայ հասեալ և սաստիկ կոտորածս արարեալ փախստական արկ զՊայաբիս 'ի կզզի մի Աթջերկրական ծոլու, և 'ի Կապադովկիա կարդեաց կուսակալ զըմն Աշակ անուն, և հրամայեաց բնակչաց երկրին խօսել 'ի լեզու Հայոց \* :

Իսկ Աշակ մարդան սկսաւ զարդարել զերկիրն դայն պէսպէս յօրինուածովք, շնուեաց զընդարձակ քաղաք և

\* Առն այսորին զմանն Փոքուն Արիա Յոյն Առանենիս իւչեցին . Բայց Հայոց զանուան պեղոյն իւչեցին սուսըն Հայոց, սուհն շնուեցոյ նախինն արկոտպետով երիրեն արդարոց Հայաստանի : Եթ որովհետու Արամ պէրեաց առա աշկեալ իսուն Հայերէն, սոսիւ Հայերէն, սոսով և այս իւչեցին երբերբ Հայոց, և երբերբ Հայոց, իսէ Երջըն 'ի միտոն իւչեցին Փադր Հայոց :

կոչեաց զայն յիւր անուն Մշակ . զոր յետոյ ոչ կա-  
բացեալ բնակչացն ուղիղ արտասանել կոչեցին Մա-  
ժակ ; որ է Առաջըիա ( Պայսէրի ) :

Հ . Ո՞յք Են գործք ծերութեան Արամայ :

Պ . Արամ գարձ արարեալ 'ի Ասպագովկիոյ արար  
զբազում քաջութիւնս յայլ կողմանն Հայաստանի , և  
զերկիրն ազատեալ 'ի ձեռաց թշնամեաց՝ խաղաղացոյց .  
և սկսաւ հաստատել զնորանոր կարգս և զկանոնս  
շարգարելով զամենայն կողմանն Հայաստանի :

Ինդ այն Ժամանակս թագաւորեաց 'ի վերայ Ա-  
սորեստանի Ախնոս և աեղեկացեալ թէ Աախահայրն  
Արամայ սպանեալ է զպապ իւր զԱեբըովթ , կամեցաւ  
բառնալ զայն մեծ նախատինն 'ի հղօր տէրութէնէ  
իւրմէ , ուստի և սկսաւ առնել զմեծ պատրաստու-  
թիւն պատերազմի : Բայց տեսեալ զարիական գործն  
Արամայ յետս նահանջեցաւ 'ի կռուոյ , և խաղաղու-  
թիւն խօսեցեալ ընդ նմա անուանեաց զնա Արկրորդ  
իւր :

Արամ այսպիսի մեծաւ փառօք պայագատեալ 1769  
ՀՀայս զամս յիսուն և ութն վախճանեցաւ թողեալ  
զակրութիւնն օրդւոյ իւրում Աբայի :

## ՏԵ.

Հ . Ո՞յք Են Երեելի գործք Արայի :

Պ . Արայ՝ որ վասն գեղեցկութեան դիմացն կոչե-  
ցաւ գեղեցիկ , պայագատեալ ՀՀայս 'ի տեղի հօր իւ-  
րոյ ձեռն էարկ առաւել ևս զարդարել ՀՀայսաստան .  
ուստի և մերձայիւր գաւառն Արմաւիր մայրաքաղաքի  
կոչեցաւ Արարատ :

Եւ իբրև մեռաւ Ախնոս թագաւոր Ասորեստա- 1767  
նեայց , յաջորդեաց նմա Համբըամ կին նորա\* . Այս  
կին վալաշոտ ցանկոյը ամուսնանաւ ընդ Արայի , խոս-  
տանալով տիրել ընդ նմա 'ի վերայ բոլոր Ասորեստա-  
նի : Բայց Արայ գոլով յամենայնի բարեխառն և

\* 'Ի հանոյա' առաջին նորաբեր եղև Համբըամ յաշնաբեկ :

ղդաստ ոչ էառ յանձն զանարժան հրաւելը Շամիրամայ, և միշտ գարձոյց առնա զգեսպանան :

Ո՞նչ զի Շամիրամ՝ յուսահատեալ դիմեաց 'ի վերս, նորա պատերազմաւ, հրամայելով զօրաց իւրաց կեցանւոյն ունիլ զԱռոյ և բերել առինքն : Իսյց Վրայ սաւ տիկ վրէժխնդութեամք 'ի ջարգելն զթքչ նամիս, խուեցաւ 'ի մահ և վաղվաղուկի մեռաւ : Աս եթող մել զօրինակ յիշատակի զդիւցազնական առաքի նութիւն իւր, որ յաղագս խոյս տալու յանկարգութենէ զահ եղեւ առաքինի վարուք 'ի մէջ պատերազմին :

Խակ Շամիրամ՝ լուեալ զիմահ Վրայի շուարեցաւ, և յանկայը դիւթութեամք կենդանացուցանել զնա, այլ յոյս նորա 'ի դերեւ ել :

Հայք յանչափս վշտացեալ 'ի վերայ մահուան առաքինի Կահապետի իւրեանց, միւսանդգամ՝ պատրաստեան ամենայն զօրութեամք 'ի մարտ : Շամիրամ տեսեալ զայսպիսի կատաղի վրէժխնդութիւն երկեաւ, և գտեալ առ իւր զայը ոմն նման Վրայի զարդարեալ զնա զգեստուք Վրայի, համբաւեաց՝ թէ դիքն յարուցին զԱռայ 'ի կեանո, և առ իւր է : Հայսմ համբաւոյ զօրք Հայոց համդարտեալ դադարեցան 'ի պատերազմի ընդդէմ Շամիրամայ : Եւ եկեալ Շամիրամայ 'ի Հայաստան 'ի սէր Վրայի զԼարդսս որդինորա անուանեաց Վրայ և կացյց 'ի տեղի նորա :

Շամիրամ տեսեալ զգեղեցկութիւն երկրին Հայոց, զմաքրութիւն օդոց, զբգիւմունս ականակիտ աղքերց շննեաց յեզր ծովուն Վզթամարայ զհրաշակերտ քաղաք, և կոչեաց յիւր անուն Շամիրամակերտ, որ յետոյ Ամի կոչեցաւ :

Հ. Օչինչ մասնաւոր գործ յիշատակի վասն Կարդոսի:

Պ. Կարդոս զորդի իւր զԱռուշաւան նուիրեաց յանտառս սօսեաց Վրամենակայ, վասն որոյ և Վանուշաւան Ասո կոչեցաւ : Յաւուրմն յայնոսիկ յարեաւ Անուասորդի Շամիրամայ ընդդէմ մօր իւրոյ, և Շամիրամ վախեաւ 'ի Հայաստան, ուր միաբանեալ ը կարդոսի

ել՝ ի պատերազմ ընդգէմ Աբնաւասայ. բայց Վարդակամ՝ ի պարագան թիւն մասնեցաւ և կարդաս վիրաւութեալ՝ ի հասակի երեսուն ամաց մեռաւ.

Հ. Ո՞ւ զինի կարգափ եղե նահապէտ Հայոց:

Պ. Եւս մահոն կարգափ մնացին Հայք առանց նահապէտի, որովհետև Աբնաւաս ըմբռնեալ զորդի կարգափ դԱնուշաւան՝ ի չորեքատասան ամսայ հասակի, զօրէն գերւոյ պահէր յարբունի պալատան իւրում. բայց Վնուշաւան գոլով պատանի խոհեմ և քաղցրած բարայ եղել սիրելի մեծամեծաց, և միջնորդութեամբ նոցա աիրեաց միոյ մասին Հայաստանի, խոստանալով առաջ զհարկու: Եւ իւր բազմահանձար և գեղեցիկ ընթացիւք զինի սուզ ժամանակաց գրաւեաց յինքն զբուլը Հայաստանի, և արարեալ զբաղաւմ բարեկարգութիւնս՝ ի հասակի վաթօնուն ամաց մեռաւ.

### Տ. Օ.

Հ. Ո՞ւ յաջորդեաց Վնուշաւանայ.

Պ. Դայկոյ մինչեւ ցԱնուշաւան որդւոց յորդիս ընարեցան նահապէտք Հայոց, բայց՝ ի շարժ Վնուշաւանայ ոչ ոք դտաւ, ուստի Պարէտ ոմն՝ ի Հայկա զանց իշխան հզօք և անսպարտելի տիրեաց բովանդակ աշխարհին, և յընթաց յիսուն ամաց մզեաց զբաղում պատերազմանու Շ. դէմ թշնամեաց: Ամա յաջորդեաց Վըբակ ոմն, և զինի նորա այլ ոմն, և այսպէս մի ըդ կնի միոյ աըք զօրաւորք տիրեցին մինչեւ ցՊարոյ:

Հ. Օ յօն գիտելիք գոն վասն նահապէտաց Հայոց, սկսեալ յՎըբակայ մինչեւ ցՊարոյ:

Պ. Դ մէջ այսոցիկ նահապէտաց թէպէտ եղեն բազում արք զօրաւորք սակայն պատմութիւնք երեկելի գործոց նոցա ոչ հասին առ մեզ, վասն զի չէր յայնժամ սովորութիւն յազգի մերում, քնախինեացն գրել պատմութիւնս և անկորուստ պահպանել. խոկ եթէ գոյք ինչ իշխատակեալ՝ ի Դիւանագիրս, այնք ևս ընդհամայն յիշատակաց հնութեան՝ ի կորուստ մատնել:

ցան։ Մավսէս Խորենացի ճառէ զի՞նչ ինչ պատմաբանական անցու 'ի գիւանաց այլոց ազգաց ողքալավ՝ 'ի վերայ ուսումնատեցութեան աղքի մերոյ։

1381 Մի՛ 'ի պատմելոց նորա էր Հայկակ նահապետ՝ այր խրոխտ և պատերազմասէր, որ քաջութեամբ նուածեաց

1366 զիմնթէոս ազքայ Ասորեստանի, և ապօ կամելով յաղթահարել զյաջորդ նորա զիմեղորս ՝ 'ի պարտութիւն

1362 թիւն մատնեցաւ յերեսաց նորա, և մեռաւ 'ի մարտի։

**Օ** արմայր նահապետ քաջութեամբ իւրսվ զար

1194 հուրեցոյց զամենեսեան, և գնաց յօդնութիւն Յունաց 'ի ժամանակս պատերազմին Տրոյից, և անդ զբազում քաջութիւնս ցուցեալ անկառ 'ի քաջաց Հելլենացւոց։

1182 Այս համբաւ հասեալ 'ի հայաստան զամս երկու վրդդովեաց զնապաղութիւնն, մինչ զի Ծաւարշ Բ նահապետ յաղթահարեալ տիրեաց ամենեցւն։

**Ն**ահապետն Պերճ գուլով այր սէգ և զօրաւոր

1883 տիրեաց շըջակայ ազգաց։ Հանգստն սմին և կայսրակ նահապետ քաջութեամբ 'ի բաց վանեաց զթ շնամիս իւր։ \*

**Ն**. **Օ** կ'նչ յիշատակի վասն Պարոյրայ։

1748 **Պ**. Պարոյր խոհեմութեամբ և քաջութեամբ զամս հինգ տիրեալ ազգիս՝ միաբանեցաւ ընդ Ապրակէս իշխանին Մարաց, և ընդ նմա գիմեալ 'ի վերայ Ապրդանաբաղայ թագաւորին Ասորեստանեցոյց յաղթեցին նմա, և զթագաւորութիւնն բարձեալ 'ի նմանէ տիրեցին Ասորեստանեցոյց։ Ապրակէս 'ի ցոյց շնորհակարութեան ետ Պարոյրայ զժագ և զգաւազան թագաւորութեան՝ զի այնուհետեւ որդւոց յորդիս արքայական շքով թագաւորեսցէ 'ի վերայ Հայոց։

\* **Օ** հիմնաւատանայ յայլ և այլ պահմէ պիրաղեառող Անհապետ մինչեւ զՊարոյր են սորտ — Պարեա, Արբանի, Օստան, Փառանանի, Ասոր, Հայունանի, Առշակ, Հայունանի, Արքան, Արքանի, Վարչակ, Աստրաճ, Կապրար, Վարդան, Կար, Գառանի, Հարանդ, Բայնանի, Գայանի, Հարույ, Օպրամայր, Ըստարչ Բ. Պերճ Ալ, Արքան, Պերճ Բ. Բառշանի երկայնակետաց, Հայ հրաշերտ, Յառանի, Ամենանի, Ամենանի, Ամենանի, Ամենանի, Փառանանան, Փառանանի, Ամենանի, Ամենանի, Ամենանի, Ամենանի, Ամենանի և որդիս սորտ Պարոյր։

Պրոյը ստացեալ զանուն թագաւորի մեծաւ վա - 1746  
ոք դարձաւ 'ի Հայաստան, և յետ թագաւորելոյ զա-  
մբո քառասուն և ութն վախճանեցաւ:

Յաւուրս թագաւորութեան Պարոյրայ որդիք  
Անեքերիմայ արքային 'Ախնուհի փախստական եկին'ի  
Հայաստան, որք պատուով հիւրընկալեալ 'ի Պարոյրայ  
եղին յապայն մեծ նախարարութիւնք, 'ի Անեքերիմայ  
սերեցու նախարարութիւնն Աստունք, իսկ յլուրամե-  
մբայ լքծրունիք և Գնունիք:

### § 12.

Հ Ո՞վ 'ի տեղի Պարոյրայ եկաց թագաւոր:

Պ. Որդի նորա Հրաչեայ, և ապա մի զինի միոյ յա - 700  
ջորդեցին — Փառնաւազ Բ. Պահոյձ Բ. Լոռնակ, Փա-  
ւսս, որոց չիք երեւելք գործ արժանի յիշատակաց:

Հայկակ Բ. որդի Փաւստայ ընդ մեծին 'Ասքու - 605  
գոգնոսոսրայ գնաց 'ի վերաբէրուստալեմի, և զոմն 'ի գե-  
րելոց Շամբատ անուն վիշնան՝ ածեալ ընդ իւր բնա-  
կեցոյց պատուով 'ի Հայաստան: 'Ի ցեղէ սորա սերե-  
ցու յաւուրս Ապդարշակայ մեծ նախարարն Բագարատ,  
յորոյ անուն համայն աղդ իւր կոչեցան Բագրատու-  
նիք:<sup>\*</sup>

Օկնի Հայկակայ Բ. թագաւորեաց որդի նորա 569  
Երուանդ Առաջին, Հետ մահուան Երուանդայ բազ-  
մեցաւ 'ի գահ արքայական արժանայիշատակ որդի նո- 565  
րա Տիգրան Առաջին:

Հ. Օկնէ երեւելք գործը պատմին վասն Տիգրա-  
նայ Առաջնոյ:

Պ. Տիգրան գերագոյն գտաւ յամենայնի քան զա-  
մենայն թագաւորու 'որք յառաջ քան զնա: 'Աշխ' մե-  
ծամեծ քաջութեամբ ընդարձակեաց զտէրութիւն իւր:  
Երկրորդ՝ զբաղում աղդս նաև զՅայնս նուածեալ  
ընդերկար կացոյց հարկատուս, և միաբանեալ ը կիւ-

\* Անուանէ ցեղին Բագրատունէաց Ամբար և Աշու ածան-  
ցեալ էն 'ի Շամբատ և Յաւուր անուանը Հրեից:

բասի արքային Պարսից յաղթեաց թագաւորաց Մարաց  
և Շառելոնի: Երբորդ՝ պայծառացոյց զազդ մեր՝ կարդ  
և կանոն եղեալ՝ ի զգեստս, 'ի կերակուրս, 'ի զնուու-  
րութիւնս և 'ի քաղաքս, և հարստացոյց զազդն ողջոյն:  
Հ. Ասն էր մարտեաւ Տեղբանը դէղէմ արքային  
Մարաց:

Պ. Քանզի յորժամ Տեղբան յաղթէր շնչակայ  
թնամեաց, և կարդադրէր զտէրութիւնն, լուաւ թէ  
Ախըս թագաւորեաց՝ ի վերայ Պարսից Հրեշտակ  
ուրախակցութեան առարեալ առնա, հաստատեաց ը-  
նմա զգաշն խաղաղութեան: Իրքե լուաւ Վճդահակ  
արքայ Մարաց զբարեկամութիւն Տեղբանայ՝ գմ դմը-  
նեցաւ քանզի գիտէր թէ Ախըս անշուշտ մատղիք  
է պատերազմիլ ընդ ինքեան՝ և 'ի Տեղբանայ զերիւդ  
մեծ կրէր: Յայուպիսի վարանս ծփեալ՝ եփես և զար-  
սակիլի երազ, զի երեք քաջ թագաւորք տիրէին հա-  
մօրէն աշխարհի, յորց ոմն յարձակեալ ընդ դէմ նո-  
րա՝ և մենամարտեալ ընդ նմա վիրաւովեաց զնա: Յահէ  
աստի զարթուցեալ խորհեցաւ պատերազմիլ ընդ թա-  
գաւորացն Բարելացւոց և Պարսից և որովհետեւ եր-  
կնչէր զէմ ունել Տեղբանայ՝ ուստի ցանկայը դաւա-  
ճանութեամբ կողուսանել զնա: Յետ քաջ խորհելոյ  
շնարս խարէութեան հրեշտակս առաքեալ ընծայիք  
առ Տեղբան, խնդրեաց զՏեղբանուհի քոյր նորա տալ  
'ի կնութիւն ինքեան, խոստանալով կարդել զնա Տեղ-  
նաց Տիկին: Չառաջնն՝ ոչ իմացեալ Տեղբանայ ըդ-  
գաւաճանութիւն նորա կատարեաց զինդիրն՝ և զայր  
իւր լՏեղբանուհի մեծաւ փառքը առաքեաց առ նա

554 'ի հաբսնուի: Վճդահակ աբար զնա թագուհի թագու-  
հեաց, և զնմ գոզծո իւր խորհրդով նը գործէր, մինչեւ  
վստահացեալ՝ ինս յայտնեաց նմա զինքըին խորհուրդո  
իւր՝ և առաց: Տեղբան միաբանեալ ընդ Ախըս-  
ոի պատրաստեալ է զիս և զքեղ մեռուցանել, ապա  
պարտէ քեզ խորհել զիսորհուրդ վասն սպանութեան  
եղօրդ, ապա թէ ոչ արկից զքեզ ՚ի տէկնութենեդ:,,  
իսկ բազմահանձարն Տեղբանուհի իմացեալ զիսորհուր-  
դը Վճդահակայ առ երեսս հաւանեցաւ ընդ բանս

նորա, ոյլ՝ ի ծածուկ զրեալ թուղթ առ Տիգրան ծանոց մի բոտ միտք զնենդութիւնն: Տիգրան իմացեալ գետաձնութիւն Աժդահակաց, աղդ արարեալ յորդորեաց զԱխերոս փութեալ ՚ի կատարումն խորհրդոց իւրց, խոստացեալ նման և զիւրն օդնականութիւն:

Իսկ ինքն Տիգրան իսկոյն ժաղսչեալ զօր բազում, խաղաց՝ ի Մարս, և ետ պատերազմը ընդդէմ Աժդահակաց, և երկարեաց պատերազմն զամբոս վեց, մինչեւ Տիգրանուհի քոյլը եւր փախուցեալ յԱժդահակաց եւ կըն առ ինքնն: Յայնուամբ եկն և Ախերոս, ընդ որում և յանհնարինս պատերազմեցան ը Աժդահակաց, և ՚ի սաստկանալ պատերազմին ինքնին յարձակեցաւ Տիգրան ՚ի վերայ Աժդահակաց, եհար և սպան զնաւ վախճան արարեալ մարտին, և բազում աւարտ ընդ ընտանեաց Աժդահակաց դարձաւ ՚ի Հայո: Ընորհեաց Տիգրան 553 նուհւոյ գքաղաքն Տիգրանակերպ, զօր ինքն եր շնուալ, և զնուանիթ Աժդահակաց բնակեցոյց առ եղերբ եւ բախտայ, յորոց սերեցան Ակշտապանիք: Խաղաց ապա ՚ի վերայ Ակեսոսի արքային Վենդացւոց և ՚ի վերայ Բարելոնի և յաղթեաց նոցա: Եյսպէս թագաւորեալ 546 Տիգրանայ քաջութեամբ և իմաստութեամբ զամս քառասուն և հինգ մեռաւ, թողեալ զերիս որդիս զ Բաբե, զՏիգրան, և զԱշահագն:

## § 1.

Հ. Ո՞վ յաջորդեաց Աքուանդեան Տիգրանայ:

Պ. Աշագն որդի նորա, արիստօն գտեալ ՚ի մէջ 520 եղբարցն տիրեաց ՚ի վերայ Հայոց, և արար զբաղաւմ դործս քաջութեան. մինչեւ Հայոց և Ակեր նմանեցուցեալ զնաւ Հերակեայ սկսան յօթինել ՚ի վերայ նորա զերդս և երգել: Խըրե մեռաւ Աշահագն թագաւորեալ զամս քառան և եօթն, Ակեր կանգնեալ յանուն նորա, յաշխարհին իւրեանց զանդրի պաշտեցին զայն, մինչեւ առել թիէ պատերազմեալ սորա ընդ վեշապաց և յաղթեալ է: ՃԵղք սորա կոչեցան Աշունիք, յորոց բաղաւմք եղեն քուրիք, և պաշտեին զատերե զԱշտուած տոհմի իւրեանց:

493 Օկնի Աահագնայ որդւոց յորդիս յաջորդեցին  
Առաւան, Եերսէհ, Օարեհ, Եքմազ, Բայրամ, և Աան  
որ նորոգեալ զՇամիբամակերտ յիւր անուն կաշեաց  
371 Աան: Դիմերայ սոցա բաց ՚ի սմանէ շպատմի մաօնա-  
ւոր գործ:

Հ. Ո՞ւ եղեւ վերջին Թագաւոր ՚ի ցեղէ Հայկազանց  
և զիարդ կորոյս զՏերութիւնն:

851 Պ. Աահէ սրգի Աանայ վերջին Թագաւոր Հայկա-  
զանց, զառտացնն քաջութեամբ աղատեաց զայայստան  
աշխարհ՝ ՚ի ձեռաց թշնամեաց: Եւ ՚ի պպառ վատահա-  
ցեալ ՚ի քաջութիւն իւր, ՚ի խաղալ մեծին Եղերսանդ-  
րի ՚ի վերայ Պարուց, առաքեաց քօդնութիւն Դարե-  
հի զքառասուն հազար հետեակս և զեօթն հազար  
հեծեալս, Բայց փեսեալ թէ Պարսիկք պարտեցան,  
և Եղերսանդը ՚ի մատի ունի մատնել յերկիր իւր,  
ինքն ևս զօրաժաղսվ լեալ ՚ի հեռաւոր և ՚ի մմատաւոր  
աղդաց, զիմեաց յոխորժանոր ՚ի վերայ նորա, և պա-  
տերագմեալ ընդ անթիւ զօրաց Եղերսանդրի՝ արար  
բազում հաբառածո, բայց ՚ի վերջոյ ինքն ևս անկառ ՚ի  
մարտի անդ, զօրբն ցրուեցան, և այսպէս տիրեաց Եղե-  
սանդը ՚ի վերայ Հայտառանիւ:

Ե. յս եղեւ պռտցնին կարծանիպւմն Տերութեան Հա-  
յոց: Քաջութիւն և արխութիւն նախնի նահապետաց  
և թագաւորաց մերոց եղեւ պատճառ պայծառութեան  
աղդին և վայէլը յազպատթեան զամս հազար ութն  
հարիւր: Ծակպէտ բազմիցս յարեան թշնամիք, բայց  
միշտ կորպագլուխ և պարտեալ յետս գարճան ամօթով:  
Խակ Աահէ քաջութեամբ իւրան զբաղմաժ ամանակեայ  
ազատ տէրութիւնն ՚ի կորուստ մատնեալ իջոյ ՚ի  
գերեզման ընդ կենաց իւրոց: Բայց ոչ քաջութեան,  
այլ խրհեմութեան պակասութիւն էած ՚ի գլուխ նորա  
զայս մեծ վնաս: Աան զի զկնի ճանաւելոյ զափ զօ-  
րութեամբ Եղերսանդրի և պարտելոյ զօրաց իւրոց միւս-  
անդամ յանդգնեցաւ ելքնել ընդ գէմ նորա ՚ի ճա-  
կատամիսրտ: Եցէ թէ վնասարեր օրինակաւ և փորձիւ  
Աահէի խրատեին յոջորդ թագաւորք նորա: Յակէ,  
զի մարդիք ոչ հաւատան, կարել վնասուց մինչև չփոր-

ՃԵԿԵՑ ԱՆԴԱՄԲ:

## § 10.

Հ. Յետ մահուան Ալոհի յոր վիճակ գտաւ տէ բութիւն Հայոց:

Պ. Օլինի կալսյ զամս երիս անտերունչ ընդ իշխանութեամբ Ացէքսանդրի, Ահման ուն կարգեցնել կու սահալ յԱզէքսանդրէ մեծէ . որ յետ կառավալարելսյ 319 զաշխարհն զամս հինգ՝ յետս կոչեցաւ . և եկն ՚ի տեղի նորա Յէսպաղմէսու՝ որ յնց տառապեցոյց զայս:

Յաւուրան յայնսսիկ Արթիթէնս որդի արքային կապադովկացւոց վանեալ ՚ի Պերդիկեայ վախստական եկն ՚ի Հայաստան: և ՚ի բազմացհետէ ունելով ոխս ընդ Յէսպաղմէսուի խրախուսեայ զայս ելքնել ընդդէմ նորա: Յայնժամ քաջարազնէ նախարարն Արևնաց Արդուարդ եղեալ գլուխ և առաջնորդ, միաբանեաց ընդ իւր զայս: և յանակնկալ պահու յարձակեցաւ ՚ի վերայ Յէսպաղմէսուի, որ հազիւ հազ կարաց փախստեամբ ազատել զանձն իւր ։ Արդուարդ նշկահեալ 317 և ՚ի բաց ընկեցեալ զՏէրութիւն Վակեդոնացւոց սկսաւ ինքնագլուխ տիրապետել ազգին:

Չայս իրեւ լուաւ Պերդիկեաս Վակեդոնացի բարկացաւ, զայրացաւ, և զԱւմէնէս իշխան առաքեաց նուաձել զայաստան: Բայց Աւմենէս տեսեալ թէ ոչ կարէ բռնութեամբ հնագանդեցուցանել զայն առաքեաց պատգամ խաղաղութեան առ Արդուարդ, զի ՚ի ձեռն Յէսպաղմէսու տացէ զսովըրական հարկս: Արդուարդ տեսեալ թէ այսչափ խոնարհեցաւ Աւմէնէս, և կասկածեալ յանմիաբանութենէ իւրօցն, հաւանեցաւ ընդ բանս նորա: Աւստի վերստին դարձաւ Յէսպաղմէսու և իրը երկրորդական Արդուարդայ կայր ՚ի Հայաստան: բայց միշտ մնադիէր զպարապ՝ առնուլ զվիշմս ՚ի Հայոց: և որովհետև Աւմենէս հակառակ կամաց նորա վարէր, ոչ հանդուրժեալ Յէսպաղմէսուի սկսաւ ընդդէմ նորա ելանել. և զբազում զօրս օդականութեան տոեալ յԱրդուարդայ խաղաց, դնաց

'ի վերայ Եւմանիսի, և երկիցս 'ի գիմի հարեալ 'ի վերջոյ և ինըն անկառ ՚ի մարտի անդ, և մեռաւ. զօրքըն ևս գարձան ՚ի վախուստ Օկնի քանի մի ամաց Եւմշնէս ևս վախճանեցաւ:

Վ. գուարդ՝ Արքիթէսս զօրօք բաղմօք առաքեաց երթալ տիրել իւր հայրենի թագաւորութեան Արպագուհացւոց: Արքիթէսս յետ յաղթութեանն առատ պարգեօք և ընծայիւք զօրին Վ. գուարդայ գարձոյց յետըս: Վ. գուարդ կեցեալ Ժեշանութեան զամս երեսուն երեք՝ մեռաւ:

Հ. Ո՞ւ ՚ի տեղի Վ. գուարդայ իշխեաց ՚ի վերայ Հայոց:

Պ. Շնդ աւուրին ընդ այսոսիկ զօրացեալ Աելեկի-

ացւոց ՚ի կողմանս Հայոց և Պարսից, առաքեցին ըլ Հրանտ կուսակալ: որ իշխեաց զանց քառասուն և հինգ ՚ի վերայ Հայոց, Պարսից, Վարաց և Պարթեաց:

Յորժամ Հրանտ մեռաւ, Վ. գուարդ սմա յաւագ իշխանաց Հայոց; Վարաննիցեալ 'ի Աելեկիացւոց սկսաւ տարածել զտէրութիւն իւր: Յայնժամ Վնտիրոս արքայ Աելեկիացւոց խաղաց ՚ի վերայ նորա ահագին ցամամամթ և մեծաւ պատրաստութեամբ: Վ. րտաւաղ ոչ իշխանաց ընդգէմ եւլանել նմա պատերազմաւ, ուստի մեծամեծ ընծայիւք հրեշտակս առաքեալ ընդ առաջ նորա, հսկատատեաց զուխտ խաղաղութեան խոստացեալ անխափան տալ նմա Հայրիս աշխարհին, և այսպէս վարեալ զիշխանութիւն իւր զամս յիսուն մեռաւ:

Հ. Ո՞ւ զինի Վ. քաւազ Կուսակալի տիրեաց Հայոց:

Պ. Վնտիրոքս արքայ Աելեկիացւոց առաքեաց զեր-

կուս կուսակալս զՎ. քաւազս ՚ի վերայ մեծին Հայոց, ՀԴարեհ ՚ի վերայ փորք Հայոց: Զայսու ժամանակաւ Վնիիրազ զօրմալետ Վարքեղոնացւոց ազատեալ 'ի ձեռաց Հռովմայեցւոց մահուստական եկն առ Վ. քաւաշաս: Վ. քաւաշաս խմանտութեամբ և խոհականութեամբ նորայոյժ կարգաւորեաց զտէրութիւն իւր, և ըստ ձեռյն զոր եցոյց Վ. ննիիրազ շնեաց զՎ. քաւաշաս քաղաք առ Երասխ գետով:

Վ. քաւաշաս և Դարեհ տեսանելով թէ որ ըստ

օրէ զօրամնան Հռովմայիցիք եղին ընդ նոսա զգաշն հաշտութեան, նշկահեալ զՄելւկիացիս, և ինքեանք զանուն թագաւորի ընկալեալ ջանադիր եղեն կարգաւորել զտէրութիւնն:

Յորժամ Անախորոս Խպիլիան թագաւորեաց՝ ի մերայ Մելւկիացւոց, և լուեալ թէ Արտաշաս ինքնու գլուխ թագաւորեաց, խազաց զօրու ծանու ՚ի վերայնու բա: ՚Ի պարտութիւն մատնեալ Արտաշասի ակամայ կամօք հնազանդեցաւ, և զբազում գանձս առաքեաց ՚ի վճարումն հարկաց: Եւ ապա կասկած առեալ, թէ պատճառ գրգռութեան ՚Պարեհ իցէ լեալ, ինդըք զվիշք առնուլ ՚ի նմանէ: ՚Պարեհ երկուցեալ բազում ընծայիւք հաշտեցոյց զԱրտաշաս, և վասն հաստատ միրայ առաքեաց առնա զկրտսեր օրդի իւր ՚Պարան անուն: Եւ եղէ ՚ի մեռանիւլ ՚Պարեհի որդինորա: Որդինուլիւլիկէս յաջորդեացնմա: Արտաշաս կամեցաւ խաղալ ՚ի վերայ Որդինուլիկեայ, և առնուլ ՚ի նմանէ զիսքըն Հայու խսկ Որդինուլիկէս աճապարեալ ապաւինեցաւ առ Արեթ արբայ Կապագագկիսյ: Յայնժամ Արտաշաս ՚ի ձեռն հրեշտակաց յորդորեաց զԱրեթ ՚ի մահ Որդինուլիկեայ, խոստանալսվ զի և ինքն սպանցէ զեզ բայր նորա զ՚Պարան, որ կայր առ իւր, և այսպէս առէ, ես տիրեցից կէս մասին վուքը Հայոց, իսկ միւսոյն Արեթ: Հայոց Արեթ ոչ անուաց այսպիսի անդութ խոր հրգոց և թագաւորեցոյց զՈրդինուլիկէս: իսկ Արտաշաս թէպէտ խորհէր զինիւլ բնդ դէմ Որդինուլիկեայ, այլ օրհաս մահուն ՚ի վերայ հասեալ ՚ի գերե եհան զլորհուրդ նորու:

Յաջորդեաց նմա Արտաւազդ օրդի իւր. և յետ թագաւորելոյ նորա զամս տասն, Արշակ Պարթևազն 159 եկն ՚ի բաց վանեաց զնա, և թագաւորեցոյց ՚ի վերայ 149 Հայոց զԱրտաւազկ եղբայր իւր, որ եղէ սկիզբն հզօք թագաւորութեան Արշականեաց:

Գ. Ի. ՏԵՂ. Ի. Բ.

**Հ.** Արագիսի՞՛ առաքինութեանց պէտք եղեն առ ՚ի  
կանգնել զահըութիւն Հայոց :

**Պ.** Արագիս յաղագս սկզբնաւորելոյ և յառաջացու-  
ցանելոյ զհամօրէն տէրութիւնս, նոյնպէս և վասն տէ-  
րութեան Հայոց՝ երեք առաքինութեանց պէտք եղեալ  
են. ա, Միւսբանութիւն . բ , Հարատակութիւն օրի-  
նաց և կարգի. գ , Ար առ ազգապետոս : Առքօք տէրու-  
թիւնն հաստատեցաւ, բաջութեամբ մեծացաւ, և զօ-  
քութեամբ ընդարձակեցաւ . որպէս յայտ յանդիման  
երեխ ՚ի գործոց Հայկայ, Արամայ, Տիգրանայ և այլոց  
քաջ նահապետաց :

**Հ.** Արագիսի՞ էին նախկին շինուածք Հայաստանի :

**Պ.** Ծակալտ այժմեան վիճակ Հայաստանի բոլորովին  
ոչ տայ մեզ ապացոյց վասն որպիսութեան վաղեմի շի-  
նուածոց սակայն յոյժ հաւանական է՝ թէ մեծագործք  
և հրաշակերտք էին վաղեմի շինուածքն . Օ այս հաւատոի  
առնեն նախ՝ մինչեւ ցայսօր աստ և անդ մնացորդք ա-  
ւերակաց և շինուածոց . երկրորդ՝ պատմութիւն աշտա-  
քակաշինութեան Բարիլոնի . երրորդ՝ վաղեմի ջանք մե-  
ծագործութեան իշխանաց, որ ՚ի վերայ բազմաց յայտ-  
նի երեխ, մինչ զի առ ՚ի մոռացօնս չարկանելոյ զյիշա-  
տակս և զփառաւոր անուանս իւրեանց, զքաղաքս և բա-  
շխնս յանուն իւրեանց կոչեին :

# ՄԵՍԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԾԱԿՈՒՆԵԱՑ:

\*\*\*\*\*

## § Ճ.

**Հ.** Օ խաղութ սկսաւ տէրութիւն Արշակունեաց։  
**Պ.** Իշխան ոմն Արշակ անուն 'ի ցեղէն Պարթևաց՝ 246  
 ապստամբեալ 'ի Անելս կիացւոց տիրեաց ՚ի վերայ Պար- 215  
 թեաց, Վարաց և Պարտից։ Եմա յաջորդեաց Ա.ը- 189  
 տաշէս, և զինի նորա Արշակ Բ. որ տիրեալ բազմաց  
 կողմանց կոչեցաւ Արշակ Անծ։ Առ 'ի քառամներոքդ 149  
 ամի թագաւորութեան իւրոյ դիմեալ 'ի վերայ Հայոց,  
 'ի բաց վանեալ անտի ՀՅԱՄՏԱԼԱՂԴ, նուաձեաց զմեծ  
 և զփոքք Հայս, և յանձն արար եղթօք իւրում Ա-  
 ղարշակայ։

**Յայնժամ եկն Աղաղարշակ. և եդ զաթոռ իւր 147**  
 'ի Անծէն քաղաքի ։ Իրը և լուսն Արվկտամեան աղքք և  
 Պոնտացիք լյաղթութ իւնս Արշակայ՝ միաբանեցան 'ի  
 պատերազմ, առաջնորդ ինքեանց ունելով զՄորփիւլք-  
 կես զորդի Դարեհի կուստկալի. վասն այնորիկ Ա-  
 ղարշակ ևս դումարեալ զօրս՝ ել ըդէմ նոցա 'ի պա-  
 տերազմ։ Հզօրն Աորփիւլքիկս զգեցեալ զպանձի. և  
 զերկաթի զրահս, զբաղում նախձիրս գործելով, ուղ-  
 ղակի դիմեաց 'ի վերայ Աղաղարշակայ, բայց քաջթիկ-  
 նաւպահք նոցա հարին և սպանին զՄորփիւլքիկս, ոզով  
 և յանձն ել պատերազմն։ Եւ Աղաղարշակ տիրեալ հա-  
 մօրէն տէրութեանց այնոցիկ կողմանց՝ արար իւր հար-  
 կատուս։

**Հ.** Օ Քնչ կարգաւորութիւնո արար Աղաղարշակ 'ի  
 մշջ Հայաստանի, յետ սպանանելոյ զՄորփիւլքիկս։  
**Պ.** Աղաղարշակ հաձեալ ընդ գեղեցիկ գերա Հայսա-  
 տանի, և զարմացեալ ընդ քաջութիւն և ընդ հաւատար-  
 մութիւնո բնուկաց նորին, զմեծ ո'ր եցոյց նոցա։

Ասխքան զամենայն կամեցաւ դիտել զսկըզբն ծագման ազգի Հայոց, և զամենայն անցս անցեալս ընսա : Ասմ որոյ Վարիբաս Աստինա անուն Վարիբոյ ումեմն յանձն արար գրել զՊատմութիւն Հայոց : Եւ յորժամ Վարիբաս ոչ եղիտ զամբողջ պատմութիւն Հայոց 'ի մէջ Հայատանի, առաքեաց զնա Վարդրշակ առ եղայր իւր Վարչակ, զի հրամանաւ նորս երթիցէ Վարիբաս որոնել զպատմութիւնս Հայոց 'ի գրատան Ամուսէի: Ենդ եգիտ Վարիբաս Աստինա զպատմութիւն Հայոց ցՎահէ, և երեր առ Վաղարշակ: Վազ յայլ և այլ տեղեաց և 'ի զանազան Պատմութեանց գտեալ, կարգաւ գրեաց զայն մինչև ցժամանակս իւր:

**Տ41** Յետ այսորիկ ձեռն էարկ Վաղարշակ վայելսոցուցանել զթագաւորութիւն իւր, հաստատել զնորանոր կանոնս, բաժանել զնախարարութիւնս, գնել զվենուորսկան կարգս, և որոշել վասն ամենայն գործոց զպէս պաշտօնատարս :

Ըստրեաց զարս երկուս յիշեցուցանողս ինքեան դրով, մին զբարին ?ի բերել նորա յանիրաւ հրամանս, իսկ միւսն զվէժինդիրն լինել յանփոյթ մնալ նորա 'ի պատժել զարագործ: \* Եւ ետ զիշխանութիւն Բագարատ անուն խորհրդականի իւրում լինել որդոց յորդի թագադիր ամենայն Վարչակունի թագաւորաց Հայոց: Կարգ եդ 'ի մէջ որդոց իւրոց զի անդրանիկի իւր մնացէ առ ինքն 'ի համար թագաւորութեան, իսկ այլք երթեալ բնակեոցին 'ի գաւառս Հաշտենից, զայս կարգ պահպեցին և ամենայն Վարչակունի թագաւորք մեր:

Վայսկոս Վաղարշակ յետ թագաւորելոյ ամս

\* Բաջ գետէր Վաղարշակ Ակ ինքնն բաղմեցս գործել առ Տարդոց զշար դիտառուի բարեոյ, և որշափ ոչ իցէ իմաստուն և արդար մըշտ կորօտի խորհրդականի: Բայցում պատերազմունքն մշեցան յաշխարհի յանձնահաճութենէ Տարդ իան, ոչ յերեանց էարծիս մեայն հասպատառաւ, ոչ կաթցան գիտէն և իմանալ Ակ առաջ շերեանց իւրծիս գուցչն իոնհանն և օդպահար իցէ այլոց:

քոսն և երկու մրուաւ ՚ի Մծբին, և յաջորդեաց նմա 127  
անդբանիկ որդի նորա Ալշակ Առաջին:

## § Ժ. Ա.

Հ. Օքարդ վարեաց Ալշակ Ա. զթագաւորութիւն  
եւր:

Պ. Խմաստութեամբ և քաջութեամբ համեսյն հօր  
եւրց, և արար զնորանոր կարգո և զիրաւունու: Յապո- 125  
տամբիւ ՚ի ամանիկ Պատուացւոց երաց ընդդէմ նոցա  
զարաւերազմ, և նուտմեաւ զնոսու ՚ի նշան յալժու-  
թեան կանգնեաց յեզր Աւեաւ ծովուն արձան քարեղին:  
Ասեն զամանիկ, թէ ունի բ նիզակ մինեալ յարիւն օձի,  
զոր յաւուր միում եհար և հարստեաց ՚ի նոյն արձան:  
Պահտացիք պաշտեցին զայն արձան իրբե զործ Ապառ-  
ծոյ, բայց յորժամ ՚ի մէջ Արտաշիսի և Պահտացւոց  
վերստին յարեաւ խոտիւթիւն, բարկացեալ Պահտաց-  
ւոց ընկեցին զայն արձան ՚ի ծով: Ալշակ նահատակեաց  
զարու երկուս ՚ի ցեղի Բագրատունեաց վասն ոչ տանիե-  
րոյ պաշտօն կուոց: և զայլ Բագրատունիս ՚ի նեղ էարկ,  
որպէս զի ոչ պահեսցեն զօրէնս իւրեանց:

Արտակ դինի թագաւորելը զաման երկուտասն մի-  
ռաւ, և ՚ի տեղի նորա բազմեցաւ ՚ի գահն արքունի Ալ-  
տաշի Առաջին:

Հ. Օքարդ երևելի գործս գործեաց Արտաշէս Ա.

Պ. Արտաշէս Ա. գոլով այց պատերազմասէր և քաջ  
զինի առնելոյ զբազում յաղթութիւնս ՚ի նեղ էարկ և  
զարբայն Պարսից և արար երկրորդական իւր: Քանդի 112  
մինչև ցայս վայր թագաւորը Պարսից համարէին առա-  
ջն, իսկ Հայոցն երկրորդ: Արտաշէս արար զինքն նա-  
խագահ նոցա, և ՚ի մէջ Պարսկաստանի ետ հատանել  
զորամու յիւր անուն և յիւր պատկեր: զՏեգրուն զոր-  
գի իւր յանձն արար իշխանին Արտամայ, զի մարզեցի  
զնս ՚ի զենուորակն արհետաս: Օգուստորիւր Արտաշամ  
անուն հարսնացոյց քաջ նախարարին Միհրդատայ ՚ի 89  
ցեղին Պարսից, զոր և կարգեաց կուսակալ ՚ի վերոյ  
աշխարհին Պահտուի:

Վարա Արտաշէս հրաման եհան ժողովել զգօրու բա-  
զումս, և սկսաւ խաղալ ՚ի վերայ Աքեմետեան աղջաց,  
և զի յանչափս բազում էլն զօք նորա, ուսափ առ ՚ի  
գետել զթիւ համարոյ նոցա, յանցանելն ՚ի քարուտ  
տեղիս հրամայէր նոցա ընդ մարդաթուի քար ընկենուլ  
՚ի մի կողմն դաշտին, ուր կառկառն լիոնանմանի բլուր  
ձեանայր: Յորդամ համօրէն զօրքն ՚ի միասոին նետս  
արձակէին, բազմութիւնք նետից նոցա նսեմացուցեալ  
դճառագայիթ ս արեգականն ստուերաւ իւրեանց զերկիւ  
ծածէին: Վայպէս անթիւ զօքոք չըբաւ մինչեւ ՚ի Յու-  
նաստան, տիրեաց կողմանցն Ոօռայի և ձերքակալ  
արարեալ զթագաւորն իւրգացւոց զիրեսոս, հրամա-  
յաց յերկաթի տապակ հանել\*: Աս գտեալ զարդին  
ձածոյլ քաջարուեստ արձանս Արտեմեայ, Հերակլեայ  
և Վարորնի առաքեաց յԱրմաւիր:

Յետ այսորիկ Արտաշէս գարձաւ ՚ի Հայտստան,  
թագաւորեցոյց ՚ի վեր Հայոց զորդի էւթ լՏիդրան Բ. և  
ինքն չըբաւ ՚ի Պարսկաստան: Վարա կամեցել տիրել ոյ-  
լոց ևս կողմանց վերստին խաղաց ՚ի վեր Արեմետեան աշ-  
խարհի. և ընդ այն աւուրս զբագլութիւն կուց Յու-  
նաստանի հրամայեաց տանել ՚ի Հայո: Մէ յայտ  
թէ վասն է՞ր ծագեցաւ խռախութիւն ՚ի մէջ զօրացնո-  
րա, ուր և ինքն սպանաւ ՚ի նոցունց, յետ թագաւո-  
րելոյ ամս քանի և հինգ:

Արտաշէս կրթեալ գոլով ՚ի գործս կառավա-  
րութեան, նախ հոգաց կրթել զորդի իւր. և ապա  
սպահպաննել զաղգ իւր ՚ի հանգստութեան: Ինքն յոր-  
ժամ կամեցաւ շրջել աստ և անդ, զՀայտստան ո՛չ ե-  
թող առանց թագաւորի: Բայց ո՛չ կարաց չափ դնել  
փառախրութեան իւրոյ, վասն այնորիկ ողբալվ զան-  
ձըն ասաց, ‘Վաղ փառացս անցաւորի:’,

\* Ոմանչ ՚ի Պարմաբանից Յառաց առեն՝ Կիւրսս պրար զայս,  
բայց Խորենացին վասն Արտաշէսի պատմէ, հատադի առեն-  
շով յայլ և այլ հին Պարմաց Յունաց:

Օկնի Արտաշեսի յոր լեհակի անկաւ տէրութիւն չայցաւ:

Պ. Բոլորովին զօրք Արտաշեսի ցիրուցան եղեն, և չառմք ապատամբեալ զեղան՝ ի Հայաստան, առ ՚ի առնուլ զվեհժո, կարծելով զհայս մնացեալ անուերունչ: Իսայ Տիգրան Բ. երկու ամօք յառաջ կարգեալ ՚ի թագաւոր, յորժամ լուսւ զմահ հօր իւրոյ, և զապատամբութիւն Յունաց՝ վերստին դորժազովեալ դեմեազ ՚Շ վերայ Յունաց, և ՚ի բաց վանեաց զամենսին: Եւ որպէս զի կը կին ոչ կարացին յարուցանել զխոսվութիւն, զ Միհրդատ քեռայր իւր արթաք փոխանորդ ինքեան և անուանեաց զնա ալբայ Պանտոսի, զի բարւոր նուաճեսց զհոռվմայեցին:

Իսկ Տիգրան դարձեալ ՚ի Հայաստան սկսաւնախ շինել զմեհեանս. զարձան Արամազդայ եղ յլնի, իսկ զ Աթենասայ ՚ի Թափել աւանի, զ Արտեմիսի յ Երիզայ (որ է Երզնկայ), զ Հփեստոսին ՚ի Բագաւուիջ, զ Արոդէտէին ևս ընդ Հերակլեայ յ Աշտիշատ կոչեցեալ տեղոց. ուր շատ զոհս մատուցանէին նմա: Օքուրմա Աահոնիս զրկեաց յիշաննութենէ, քանզի առանց հրամանի նորա զարձան Հերակլեայ տարան յաշարչ իւրեանց: Եւ հրամայեաց համօրէն նախարարաց պաշտել զկուռու. իբրև ոչ յանձն առին Բագրատունիք, պատժեաց զ Ասուդ կտրելով զերգուն, և զիշանութիւն գորապետութեան խլեաց ՚ի ձեռաց նոցա, միայն զթագադրութեան պատիւ եթող ՚ի նոսա, որով հետեւ յանձն առին ուտել զխոզենիս: Ապա չոքաւ Տիգրան ՚ի Միջագետո. և անգ զարձան Բարշամ դից Ասորւոց, որ կազմեալ էր ՚ի փողսկրէ արծաթով և բնորեղաւ առաքեաց ՚ի Թարդան:

Աստի անցեալ յ Ասորեստան ձերբակալ արաք զ Այեղինէ Թագուհի նոցա, և սպան: Օքազում գանձըս առեալ յ Աղեքսանդրայ թագուհուոյ Հթէից, և զյոլով գերեալ ՚ի նոցանէ գարձաւ յետս, ընոր առեալ թէ Ապյկան բռնաւոր ոմն գիմեալ գոյ ՚ի վե-

բայ Հայաստանի:

Տիգրան Բ. տիրեալ յոլով ազգաց զհռչակ անուան իւրոյ տարածեաց ընդ տիեզերս. զգերի վարեալ արքայո ծառայեցուցանիշը ինքեան. իսկ զչորեսին արքայո հանապազ ՚ի սպաս ծառայութեան իւրոյ կացուցանէր թագաւորական պատմուհանօք:

Դ. Օ յօնչ արժանայիշատակ գործս արար Միհրդատ ՚ի լինեն փօխանորդ Տիգրանայ:

Պ. Միհրդատ՝ հանգոյն Տիգրանայ գոլով այլ հզօք և անպարտելի, տիրեաց քսան և երկու թագաւորաց մինչև ՚ի սահմանն Ակիւթացւոց մեծաց, և ընդ ամենեսին խօսիր յիւրեանց բարբառ առանց թարգմանիւ: Այս նուածեալ զկապագսվեացիս թագաւորեցոյց ՚ի վերայ նոցա զորդե եւ զԱրեարաթ և իննամակալ կարգեաց նմա զԳորդիսա ոմն իշխան: Կապագսվեացիք գեմեցին առ Հռովմայեցիս, որը եկեալ վանեցին զԳորդիսա և զԱրեարաթ:

85 Յայնժամ ազաւանօք Միհրդատաւ Տիգրան զօրս առաքեաց և դարձեալ հալածեալ զՀռովմայեցիս՝ թագաւորեցոյց զԱրեարաթ որդի Միհրդատայ ՚ի վերայ Կապագսվեացիս:

Արտմեալ Միհրդատայ և դառնացեալ ըգեմ Հըսումայեցւոց, գումարեալ զօրս բազում և զերեք հարեւը նաւս, սկսաւ տիրել բոլոր փոքուն Վայոյ: Օ այն ըսւեալ Հռովմայեցւոց առաքեցին ՚ի վերայ Միհրդատայ զըսպմաւթիւն զօրաց, զօրս միանգամայն ՚ի սուրսուսերի մաշեաց: Ճշ կալեալ զզօրապետ նոցա զԱրեզոս անուն, զփախացեալն ՚ի Պերգամոն, ետ հալել ՚ի բերան նորա զոսիին առ ՚ի ցուցանել զինքն առատաձեռն քան զՀռովմայեցիս:

Վայսպէս Միհրդատ և Տիգրան յետ բազում պատերազմաց յաղթեալ Հռովմայեցւոց, երբեմն իրեկ Միհրդատ պաշարեաց զՄիւղեկին քաղաք, որ եր ընդ իշխանութեամբ Հռովմայեցւոց, յերկարիւ կուոյն պակասեցաւ պաշար զօրաց իւրոց. և յորժամ սիռեցան դատանել լուտեստ, Վուկուղոս զօրալար Հռովմայե-

ցւոց յանհնարին գառնութենէ սրտին կատաղի յարձաւ կեցաւ՝ ի վերայ նոյա, և զմեծ կոտորած արար՝ ի նոսա, մինչ զի Վիհըդատ քաջութեամբ պատերազմեալ հազիւ կարաց՝ զօրօք իւրովք խոյս տալ՝ ի Պահտոս, և այսպէս Վուկուզզոս սկսաւ տիրել երկրին Վիհըդատայ:

Յորժամ Վիհըդատ վերստին՝ ի դիմի հարաւ Հուովմայեցւոց, յարեաւ խոռոշութիւն՝ ի մէջ զօրաց նորա, և բաղումք՝ ի զօրապետաց նորա յարեցան՝ ի Հուովմայեցիս. և Վիհըդատ ապաւինեցաւ առ Տիգրան, Տիգրան փոխանակ ձեռնտու լինելոյ բարկացաւ ընդ նա վասն պարտութեանն:

### Տ Ժ Գ.

2. Օ լ՛նէ արար Վիհըդատ յետ պարտելոյ իւրոյ՝ ի Պուկուզզոսէ:

Պ. Իմացեալ Պուկուզզոսի՝ թէ Վիհըդատ գնացեալէ առ Տիգրան, գեսազանս առաքեաց առ Տիգրան տալ՝ ի ձեռս իւր զՎիհըդատ: Բայց Տիգրան չանսաց բանից նորա, այլ արձակեաց զՎիհըդատ տասն հազար հեծելազօրօք՝ ի Պահտոս: Իբրև լուաւ Պուկուզզոս անհնարին ցասմամբ սկաշարեաց զՏիգրանակերտ: Եւ ինքն Տիգրան երեք հարիւր վաթունն հազար զօրօք խաղաց՝ ի վերայ Պուկուզզոսի և արհամարհելով վասն սակաւութեան զՀուովմայեցիս՝ ասոց.

“ Օ լ՛նէ են դոքս, եթէ գեսպանք՝ յոգունք. իսկ եթէ թշնամիլը՝ նուազզանք: , , Օ այս ասելով ամեննեին անհոգ եղեւ վատահացեալ՝ ի բազմութիւն և՝ ի քաջութիւն զօրաց իւրաց: Պուկուզզոս իրազեկեալ նորհըդոց նորա յանկարծ յարձակեցաւ՝ ի վերայ նորա, ցրուեաց զզօրսն, և՝ ի վախուստ վարեաց զՏիգրան. և անստի դիմեալ՝ ի վերայ Տիգրանսակերտի եաւ զքազքն:

Տիգրան վերստին առաքեաց զՀեծելազօրս՝ ի վերայ Պուկուզզոսի, և սոքօք յաղթեալ նմա՝ ի վա-

խուստ վարեաց մինչև՝ 'ի կապագովկիայ։ Կամեցեալ  
Տիգրանայ լաւ ևս վրէժ առնոււլ՝ 'ի Հռովմայեցւոց՝  
կացոյց իւր սպարապետ զՄիհրդատ, և զօրու ծանու  
առաքեաց ընդդէմ նոցա։ Խաղաց ապա և Տիգրան՝ 'ի  
սահմանս կապագովկիայ, տիրեաց երկրին և հալածեաց  
զ՛ ուկուզզոս։ Ծնդ այս ցասուցեալ Հռովմայեցւոց  
62 փոխանակ Պուկուզզոսի առաքեցին զՊոմպէոս՝ 'ի վե-  
րայ Միհրդատայ։

Հ. Կարայ Միհրդատ յաղթել Պոմպէոսի։

Պ. Ուշ. վասն զի նախարարն կաստոր կաշառտքեկ  
եղեալ՝ 'ի Հռովմայեցւոց, ապստամբեցաւ՝ 'ի նմանէ,  
նոյնպէս և հարազատ որդի նորա Փառնակէս կալեալ  
զկողմն Հռովմայեցւոց թագաւորեաց ընդդէմ հօր իւ-  
րոց։ և սկսաւ գիմել պատերազմաւ՝ 'ի վերայ նորա։  
Մինչ զի Միհրդատ հուսկ ուրեմն պաշարեալ մնաց  
'ի միում ամրոցի. և իրբել՝ 'ի սպառ յուսարեկ եղեւ,  
նախ արբոյց զգեղ մահու համայն ընտանեաց իւրոց,  
էարբ տպա և ինքն։ Ըստ որպիսի կատաղութիւն և  
95 որպիսի խղճութիւն։ Իսյոյ մինչ գեռ տակաւին թոյնն  
չէր աղդեալ՝ 'ի նա, ետես եթէ թշնամիք առին ըպ-  
քերդն. սրով չըբառ զիւրովի։

Ըստիսի քաջաբագուկ այր, որ աւելի քանի զա-  
մըս յիսուն զգողանի էհար զհամօրէն աշխարհ. և զա-  
մենեսին՝ 'ի պարտութիւն մատնեաց՝ պարտեցաւ յա-  
պիրատութենէ աղդի իւրոց. և յաղթեցաւ՝ 'ի նենդու-  
թենէ հարազատ որդւոյն։ Խնդի մասպատմերի Ճգամքը  
պատրաստեաց զիւռառ և զհանգստութիւն վասն աղդին  
և որդւոյն. բայց որդին ապիրատ զքաղմաղիմի վաս-  
տակս հօրն զյաղթանակս քաջաւթեան և զիւռառ աղ-  
դին յընթացս միոյ տարւոյ առ սան հարեալ՝ 'ի կո-  
րուստ մատնեաց. և յաւէտ քան զամենայն արկ զան-  
ձըն իւր՝ 'ի նախատինս յաւիտենական։

Հ. Զէնչ արար Տիգրան Բ. յորժամ լուաւ ըպ-  
գալուստ Պոմպէոսի։

Պ. Ծնդ այն ժամանակս նախ քան զմեռանիլ Մի-  
հրդատայ, Տիգրան որդի Տիգրանայ ապստամբեցաւ, և  
յուսացեալ առ Ըստ արքոյն Պարսից եկն և սրաշ-

րեաց զԱրտաշտ քաղաք՝ Տիգրան ՚ի վերայ հասեալ  
հալածեաց զՏիգրան, որ յայնժամ շուարեալ և ՚ի  
եղ անկեալ դիմեաց առ Պամպէսս։ Եւ առաջնօրդու-  
թեամբ սորին Տիգրան ոյ Պամպէսս եմաւտ խրսիալով  
՚ի Հայաստան։

Տես թէ ով սկսու ուսուցանել Թշնամեաց ոտ-  
նակիս առնել զՀայաստան։ Տիգրեալ Տիգրանայ թէ  
յանմիաբանութենէ նախարարաց չկարէ յանկ հանել  
նստան ՚ի Հայս ՚Պարսիկ մարզպան, մինչև զօրացան  
Տաճիկը և վաղվաղակի տարածեցին զրազուկո իւրեանց  
՚ի վերայ Հայաստանեայց, և ՚ի ձեռն Ոստիկանաց  
կառավարեին զ Հայաստան։

## Տ. Ե.

Հ. Ո՞լ եղեւ մարզպան Հայոց զկնի Միքատայ  
Բաղմայաղթի։

Պ. Դաւիթ Վահառունի, որ զկնի Միքատայ ա-  
զաշանօր նախարարաց ընտրեցաւ մարզպան Հայոց։ Յո-  
ւուրու մարզպանութեան սորա թշնամնցեալ իստորիու-  
սնդ Մաւշեղ Ռզատ իշխանին Վամիկանեան. զՄիք-  
րան քեռորդի իւր առաքեաց զօրօք ՚ի Տարսն գաւառ։  
Մաւշեղ ինքնին ոչ համարձակեալ ելանել ընդդեմ  
նորու առաքեաց զԴայլ Վահան զաղգական իւր ։  
Սոյն Գայլ Վահան բազում հնարինք եպատ ՚ի պատ-  
րանիւք սպան զՄիքրան և զհամայն զօրս նորա։ Մրտ-  
մանեալ խոսրովու առաքեաց ՚ի վերայ Վահանայ զօ-  
րու ծանու զՄախթանիկ. իսկ ՚ի գրգռիւլ ահեղ մարտին  
եհար Գայլ Վահան զզօրս ՚Պարսից ՚ի հարուածս  
սաստիկո, յ՛տ սյսորիկ հիւանգացեալ մեռաւ և թա-  
զեցաւ ՚ի վանս Գլոկայ։

՚ի Մեռանիլ Գայլ Ա ահանայ յաջորդեաց նմա  
սրդի նորին Ամբատ, որ սպան զԱ ախմանկ և լոյլ  
զօրավարս : Այս յորժամ թագաւորեաց Յաղկերտ  
վերջնը . Ամբատ զհաշտութիւնս խօսեցաւ ընդ նմա,  
607 625 իսկ ՚ի աւելի Աահառունի՝ յետ վարելոյ զմարզպա-  
նութիւնն ամս քսան և չորս, կասկածեալ ՚ի չարա-  
խօսութենէ սմանց, ել և գնաց ՚ի կոստանդնուպօլիս:  
Եւ ՚ի տեղի նորա Խօսրով կացոյց մարզպան Հայոց  
զԱ արադափերոց Բագրատունի զօրդի Ամբատայ Բագ-  
մայակթի, որ զինի ամս եւթն վարելոյ զմարզպանու-  
թիւն զահի հարեալ ՚ի մարզպանէ Ա տրպատականի  
ել հանգերձ ընտանիք և չորս յաշխարհ Յունաց:  
Հ. Ա զինի Ա արազոփերոցի Բագրատունոյնսաւ-  
մարզպան ՚ի մերայ Հայոց :

Պ. ՚ի ժամանակս Խոյս տալոյ Ա արազակրոցի ՚ի  
Յունաստան, յաջուցեալ եր ՚ի մէջ Պարսից խոսովու-  
թիւն մեծ, և Հագարացիք զօրացեալ յարձակեցան  
՚ի վերայ և տիրեցին բոլոր Պարսիկաստանի:

Յնդ այն ժամանակս Հայք՝ փոխանակ հաստա-  
տելոյ խոհեմութեամբ ՚ի միջի իւրեանց զէարգաւորեալ  
տէրութիւն, ինդըեցին ՚ի կայսերէ Յունաց, զի բզ-  
632 Պատիթ Աահառունի առաքեցի կիւրապազատ իւ-  
րեանց: Եւ յետ երից ամաց մերժեցին Հայք զՊա-  
տիթ, և սկսան յառնել ՚ի վերայ միմեանց և վեր ՚ի  
վայր արարին զաշխարհս մեր: Ա ան որոյ Հագարացիք  
դիպոլ ժամ գտեալ արշաւեցին ՚ի Հայս յանդուգն  
զօրութեամբ:

636 Ոճէոդորոս Ուշունի տեսեալ զվրդալումն աշ-  
խարհին՝ ժողովեալ զզօրս սկսաւ խնամել զազգն երբ  
զզօրավար: Զայսու ժամանակաւ Հագարացիք սկսան  
դիմել ՚ի վերայ աշխարհին Տարօնոյ: Ա ահան Աամ-  
սարական ութն հազար արամբը պատրաստեալ եր տալ  
զպատերազմ: ուստի գեսպանս առաքեաց առ ամենայն  
նախարարս Հայոց՝ զի եկեւլ ՚ի միասին կալցեն զգէմ  
նոցա, բայց ամենեքեան ես արհամարհեցին զնա: Եւ  
՚ի պատերազմիլ զօրաց Ա ահանայ Աամսարականի ընդ  
կընամիսն, Աահուռ Ա նձատացի՝ մեզնեալ իւրովքն ՚ի

բանակին Հայոց, խառնեցաւ ընդ թշնամին. և գար  
ձոյց լսութ իւր ՚ի Հայու Յնեա ՚ի պարագանեան մատ  
նելոյ զօրաց Ատհանիոյ, Հագարաց չեք տարածեալ ՚ի  
Հայու զբաղում՝ կոտորածս արարին ՚ի անդիս տեղիս,  
բազմօք միասնակալ Հայատանին: Կառ մասին ՚ի Դո  
ւին քաղաք, ուր զինի կատորելոյ զբաղումն ՚ի գերու  
թիւն վարեցին զերեսակն և հինդ հազար ոգիս: Տե  
սեալ Եղբի կաժմովի կասի զթշուառաւթիւն աշխարհին  
՚ի սուգ եմուտ, և ՚ի բազում ցառաց սրախ իւրոյ հի  
ւանդացեալ անկառ ՚ի մահիճու և մեռաւ: ՚ի տեղի  
սորա քստաւ Աքրուս կաժմովի կոտեցեալն Ծինող,  
որ զբաղում կովծանեալ տեղիս նորսգեաց, և խնդ  
րեալ ՚ի կոտամնդէ կոյսւերէ Յունաց կացոց զԱ ա  
րազուիրոց կիւրապացոտ ՚ի վերոյ Հայոց, որ զինի մի  
ոյ տարւոյ մեռաւ, և նստաւ ՚ի առեղինարա որդի նո  
րին Ամբատ:

## Տ Լ Ո Յ

Հ. Օ խանդ անցուցին Հայք զաւուրս իւրեանց ՚ի  
ժամանակիս կիւրապաղատութեան Ամբատայ:

Պ. Օ կնի հանդարտելոյ Հայաստանի քամս երկուս,  
մերստին յարձակեցան ՚ի Հայու բազմութիւնք զօրաց  
Հագարացւոց, և գիմեալ ՚ի ներքս հարին ՚ի բերան  
որոց և կոտորեցին Աղջիկովատաքիս և զԲզնունիս, և  
անտի անցին յԱրտրատ աշխարհ: Յայնժամ տեսեալ  
նախարարաց մերոց, զի անհնարին է միաբանութիւն  
նոցա, բաւ ևս համարեցան լինիլ ծառայ Հագարա  
ցւոց՝ քան թէ ընտրել զօք ՚ի միջոյ իւրեանց և հնա  
զադիլ նմա միով հոգւով. ուստի ելն տմենեքեան  
ընդ առաջ նոցա՝ և խոստացան տալ զհարկս աշխար  
հին, ՚ի բայ կոտով ՚ի հպատակութենէ Յունաց:  
Յ ըման՝ լուաւ կոյսրին Կաստանդ, թէ Հայք եղեն  
համկատու Տաճկաց, բարկացաւ յոյժ, և բազում  
զօրք եկն ՚ի Հայաստան ՚ի սպառ նկուն առնել զնո  
սս: Աղջմաղակի գնաց ընդ տուած նորա Աքրուս կա  
թողիկոս, և զպատճառան եղեալ առաջի կոյսր զիջոց

652

զբարկութիւն նորա : Ապա կայսրն կաստանդ յետա  
գարձաւ թողեալ 'ի Դաւին քաղաքի զսլահապան զօրս  
Զայս իրբե լուան Հագարացիք վերստին դիմեցին 'ի  
Հայաստան, և միջնորդութեամբ Աասակայ պատրիք  
առեալ 'ի պատանդ առաւել քան զհազար ողիս զը-  
նացին յաշխարհն իւրեանց : Դ յաջորդ ամի մեռաւ  
Ամբատ կիւրապաղատ, կեցեալ յիշխանսութեան ամս  
ասան :

Հ. Ո՞ւ նոտաւ կիւրապաղատ զկնի Ամբատապ, և  
զիանդ եղե վիճակ Հայոց :

654

Պ. Համազասպ Վամիկոնեան . որ յետ երկուց ա-  
մաց 'ի պատճառու ծանրակիք հարկացն եմուտ վերստին  
ընդ իշխանութեամբ Յունաց : Զոյս իրբե լուաւ Ամ-  
բապետն Հագարացւոց իսկոյն ետ խողսողել զամենայն  
պատանդու տրեալու 'ի Հայոց, և կամբը ինքնին զալ  
'ի վերայ Հայաստանեայց, բայց ոչ յաջողեցաւ նմա-  
այս, զի ի՞քն սպանաւ յիւրոցն : Հայոց յաւուրս Վա-  
ւեայ յաջորդի նորա մալին Հայք վերստին ընդ էւսա-  
նութեամբ Հագարացւոց : Իսկ Համազասպ կացեալ  
յիշխանութեան յամս հինգ մեռաւ, և Գրիգոր Վա-  
միկոնեան եղբայր նորա կարգեցաւ 'ի տեղի նորա, որ  
յամս քսան և չորս վարեալ վիշխանութիւն իւր ան-  
կաւ 'ի պատերազմին ընդգեմ թշնամեաց և մեռաւ .

685

զինի որոյ իրը յամս երկու բոլորսին սոնակոխ եղեւ  
Հայաստան մինչեւ ցԱշոտ Տագրատունի . որ յարեաւ  
և սկսաւ մարտնչել ընդգեմ թշնամեաց, և ապա ը-  
Հագարացւոց զհաշտութիւն խօսեցաւ : Ցոյնժամ  
Յոյնք սկսան վերստին ցամսութ 'ի վերոյ Հայոց վասն  
կռելոյն դգաչն ընդ Հագարացիս, և այսպէս հետ զհեաէ  
մերթ Յոյնք և մերթ Հագարացիք գուն զործէին ոտ-  
նակոխ առնել զՀայաստան : Յայսմ Ժամանակի Հա-  
յաստան նմանիւր անդլուխ մարմեաց, որ կենդանիէ  
բայց ոչ կարէ կառավարիլ :

693

Յոյսմ հետէ առաւել քան զառաւ ել զօրացան  
Հագարացիք . և 'ի 693 թուականին Քրիստոսի սկսան  
Ոստիկան անուամբ զՀագարացի սմն առաջել վերա-  
կացու Հայաստանեայց, որք բազմից ընդգեմ կամաց

Վմիրապետի իւրեանց նեղէին չորշարէին և կեղքէին  
շազգ մեր:

Հ. Ո՞վ եղե առաջին սստիկան առաքէալ 'ի Հա-  
գարացւոց և դիարդ վարեցաւ ընդ ազգին:

Պ. Եւածնի սստիկան եղե այլ օմն Ա. բարձրա անուն,  
որ նենդութեամբ կալիսլ զբազումն 'ի նախարարացն,  
նաև զ Ասհակ կոմթ ողիկաս եղ 'ի շղթայս, և առաքեաց  
'ի Դամասկոս: Խակ Ամբատ Բայրատական՝ փախուցեալ  
'ի միջոյ նախարարաց, ինդրեաց օդնութիւն 'ի Յու-  
նաց, և զըրս իւր խառնեալ ընդ զօրաց Յաւնաց պիքն-  
գեցան զիւտ Ա. բարձրաց, հարին չորտչար զգօրս նոքա,  
և զ Ա. բարձրաց 'ի փախուոտ վարեցին: Ամբատ կարգեալ  
'ի կայսերէ կիւբառազարտ Հայոց եկաց խազազութեամբ  
իրը ամս երկու մինչև եւ Ասհմատ զօրավար Հագա-  
րացւոց 'ի պատերազմ 'ի վերայ սորս, և սկսաւ վը-  
նաց մեծ հասուցանեւ Հայաստանի: Յայնուամ Ա. բա-  
րձրէ Ասմարական միաբանեալ ընդ Ասհակայ յանիկար-  
ծակի յարձակեցաւ 'ի վերայ Ասհմատայ, և բազում  
նախակից աքեան գաղձեալ հալածեաց զ Ասհմատ:  
Չ քաւ Ասհմատ առ Ամիրապեան, որոյ հրամանաւ  
ժաղովեալ զանհամար բազմութիւն զօրաց դարձաւ. 'ի  
Հայաստան առ 'ի առնուլ զվիճ: Տայց Ասհակ կո-  
մթաղիկաս առաքեաց առ Ասհմատ գեսպանս 'ի Դա-  
մասկոսի, և ինողրեաց հրաման երթալ պա նո, սո-  
կայն մինչդեռ 'ի ճանհապարհի եր անկաւ 'ի սաստիկ  
հիւանդութիւն, ուստի զըրեաց զգիր աղաջնաց առնաց  
և մեռաւ: Եւ իրեւ եկի Ասհմատ առ դի Եցրանեւ-  
լոցն՝ յայնուամ հրաշեք իմն մարմին որբոյն մատոյց  
նմա ձեռօք իւրավը զթուղթն և արար զիսպազութիւն  
խակ ինքն Ասհմատ դարձաւ 'ի Դամասկոս և հաւա-  
նեցու ցեալ զ Ամիրապեան արձակեաց զհամայն գերին:

Հ. Օ՞ս առաքեցին Հագաբացեք զկնի Ա. բարձրաց  
սստիկան 'ի վիրաց Հայոց:

Պ. Օկնի ազատելոյ Ամիրապետին զգերին աղա-  
չանօք Ասհմատայ առ աքեաց սստիկան զայր օմն Կաշմ-  
անուն, որ հնարիեք իմն ժաղովեալ զբազմութիւննա-  
խարարաց և աւագաց այլեաց զնոսա յեկեղեցւու Ա. բ-

702

704

խիջեանհայք: Բայց Ամբատ կիւրապաղաւտ և այլ քանի  
մի նախարարք զերծեալ 'ի ձեռաց Կաշմայ փախեան  
'ի մասն Յունաց, և տեսեալ զի Յոյնք փոխանակօգ-  
նելոյ ինքեամոց եղերէին զենքեանս, վասն որպէս յաւա-  
րի առին զքաղաքն: յորում նստէին, և կտղապատեալ  
դեկեղեցիս նոցա՝ դաշճան 'ի Հայաստան: Յոյնք գառ-  
նացեալ ընդ այս նզովս կարգեցին 'ի վերայ Հայոց,  
զոր և ամի ամի կարգային 'ի Պատմին: — Ո՞ կարէ  
պատմել զքաղիս յառաջ եկեալս յանմիս լիս ժխնդրու-  
թենէ:

## § 1. Ե.

303  
• Ո՞ լ յաջորդեաց Կաշմայ ոստիկանի:

717 Պ: Օ կնի չորեքտասանհամեայ ոստիկանութեան Կաշ-  
մայ եկն 'ի տեղի նորա Ա լ լ թ, և զենի յաջորդելոյ  
742 նման քանի մի ոստիկանաց եկն Վրուան. որ յերկ-  
րորդում ամի ոստիկանութեան իւրոյ յանձն արար  
շագանակ, և ինքն չոքաւ 'ի Պատմոկս, և յաղթող  
գտեալ թշնամեաց նստաւ Ամիջապետ, Աշոտ Բագ-  
րատունի սկսաւ թարւոք խնամել զազգն, այլ յետ  
քանի մի ամաց 'ի մեռանիլ Վրուանայ Ամիջապետի,  
Հագարտոցիք առաքեցին զնոր ոստիկան Եղիտ անուն,  
և յաւելմալ դհարկ աշխարհին, ձեռն առկին յոյժ նե-  
758 ղել դայրոյ: Յորոց անհնարինս տագնապեալ Հայոց  
խորհեցան վտարանցիլ յԱմիջապետէն. բայց Աշոտ  
Պատրիկ ընդզէմ կայր կամաց նոցա: Պարիգոր և  
Պաւելթ իւնամիք Վասիկանէից, ոքը արգէն յոյժ նո-  
րանձեալ ենի ընդ վտառ նորա գիմեցին 'ի Քերայ Ա-  
շոտոյ և բրեցին զազգ նորա:

• Յետ կուրացուցանելոյ զԱշոտ կարացին ար-  
գեզը կատարել զնորհուրդ ապատամբութեան:

Պ: Ոչ. քանիզի խոզհուրդ 'որ ոչ հայի յօդուտ հա-  
սարակաց, և գոյծի թեթևամբութեամբ՝ առանց խոր-  
հելոյ զվախճանն չցայն վայր ընթանայ մինչ հասուցէ  
զտրիս. և անդէն զգեղի առնաւ: Ինքեանք էին 'ինե-

զութեան, և զԱշտ պատրիկ տեսանէին՝ ի մէջ դոյջն  
վառաց, ուստի ի կրից նախանձու զանատամբութեան  
խորհէին զնորհուրդ, որպէս զի գնւցէ գիւղեալ բախ-  
աի հառանիցին պատուոյ: Բայց երբ զնաւ ևս արկին՝ ի  
թշուառ վիճակ քան զիւղեանցն, յայնժամ սիրու նո-  
ցա պաղեցաւ, և փափաք ապատամբութեան ևս գա-  
դարեցաւ: Ա. Ա. Եզիւտ յետ երկուց ամսոց չարշարելը յ  
զհայս կոչեցաւ յետու: և զԱմբատ Բագրատունի ա-  
նուանեաց Պատրիկ, որ եր այց բարեպաշտ և խոհեմ՝  
և խնամէր զագգն, բայց չէին պակաս ՚ի Հայատա-  
նեայց ասպատամէր և հարկը ծանունք: ՚Ի վեցերսրդ  
ամի իշխանութեան Սահակայ Պատրիկ Սուլէյման  
կազմակալ Արմենիա կարգեցաւ ոստիկան Հայոց:  
Եկտ այսարիկ նստան այլ ևս ստիկանը և շնորունա-  
կաբար չարշարէին զհայս: ևս առաջել քան զամե-  
նեսին Հաստն ոստիկան սկսաւ չարաշար տանջել զազգ-  
մեր, աստ և անդ ասպատակս առաքելով: Երբեմն  
յորժամ զօրք նորա ասպատակ սիրեալ էին զկողմարէ 780  
Տարծոյ, գառնացեալ յոյժ Վուշեղայ Վամիկ մուշի  
յարձակեցաւ ՚ի վերայ նոցա, և սպան զողիս թիւրիւր,  
և ապա յետ կոտորելոյ միւսանգտամ զբաղումս գրանաց  
՚ի Վուշին և ՚ի փախուստ վարեաց զհասան ստիկան:  
Ռնդ այն ժամանակս այլ ևս ոմանք ՚ի Հայոց միա-  
բանեցան ՚ի մի սիրտ և ՚ի հոգի արք իրեւ հինդ հա-  
զարք, և սկսան զոհմ ունիւլ Հագաբացւոց: Յայն  
ժամ ժողովեալ Հագաբացւոց աւելի քան զեղեսուն  
հազար արանց գիմեցին ՚ի վերայ Հայոց, և կոտո-  
րեալ աւելի քան զերիս հազար ՚ի նոցանէ, զմաւ-  
ցեալն փախստական արարին: Եշտ կոչեցեալն Վա-  
կեր ժողովեաց վերստին զարս կորուլիս, և զքաղում  
կոտորածս արար ՚ի զօրս Հագաբացւոց: Ա. Ա. վար-  
դովումն տեղաց զամս վեց, մինչև եկն ՚ի Հայոց նոր  
ստիկան Եզիւտ Բ. և նուածեաց զամենեսին, էտ  
զքաղում պատանդս, յաւել զհարին և նեղէր զնոտա:  
Հ. Ո՞վ յաջորդեաց Եզիւտայ Բ. և ցո՞ր աստիճանն

էհաս թշուառութիւն Հայոց:

Պ. ՚Ի ժամանակս Եզիւտայ Բ. Թշուառութիւն 798

Հայոց էանց առաւել քանի զշափն ։ Եղինոսյ Երկրորդ  
դի յաջորդեաց Խուզվիմա սոտիկան. որ գոլով խաղա-  
զսսէր նուաձեաց զբանութիւնս այնոցիկ, ուրք ը դէմ  
կամաց Ամբագետին նեղէին զ հայս, և պահպանեաց  
818 զաղգն ՚ի խաղաղութեան. Ամա յաջորդեաց Հոլ ։ որ  
թէպէտ էր այր խաղաղասէր, բոյց Խետագոյ անուն  
ոմն ՚ի Հագարացւաց կին տուեալ ՚ի տանէ Բագրա-  
տունէաց, կամեցաւ տիրել աշխարհին Հայոց. և բա-  
զումը ՚ի նախարարաց միաբանեցան ընդ նմա : Ուստի  
սոտիկանն Հոլ ՚ի ծածուկ լուեալ զետրհուրդս նորա.  
ժողովեաց առ ինքն զարս հզօրս իրը հինգ հաղար. և  
յանկարծուստ ուժգին զօրութեամբ յարձակեալ ՚ի  
վերայ նոցա կոտորեաց զամենեսին, և գնացեալ բու-  
դոքեադ առ կաթողիկոսն ՚Կաւիթ, որոյ միջնորդու-  
թեամբ վերստին հաշմեցաւ :

## § 1. § .

Հ. Ո՞լ ՚ի տեղի Հոլայ նամաւ ոստիկան, և զե՞նց  
նոր թշուառութիւնը դիպամն Հայոց :

Պ. Յոթմամ Հոլ սոտիկան դարձաւ յետո, աղա-  
չանօք ումանց նախարարաց ընտրեաց վիմանակ իւր պատ-  
րիկ ՚ի վերայ Հայոց զ Բագրատ Բագրատունի : Յա-  
ւուրս սորա Պարսիկ ոմն Բարան անուն՝ իշխան սէգ  
և խրոխտ կամէր տիրել Հագարացւաց, Բագրատ ել  
ընդդէմ նորա զօրնք Հայոց յօդնութիւն Հագարա-  
ցւոց, զոր և ՚ի պարագաներն մատնեցին : Բոյց ապա  
սոյն Բագրատ հաւատալով ստուպատիր բանից ոմնեց  
անօրինեցաւ ընդդէմ Յոհաննու կաթողիկոսի, և ՚ի  
գործս տէրութեան գտեալ յանցաւոք անկաւ յաջաց  
ամենեցուն : Ինդ այն ժամանակս Ապուսէթ սոտիկան  
եկն ՚ի Հայս. և նենդութեամբ կալեալ զ Բագրատ  
կապեաց ՚ի շոթայս . և առաքեաց առ Ամբագետն.  
ուր կամեցիւլ սորա աղամանէն ՚ի ցածմանէն ու բացաւ  
առ երեսս զհաւաան : Իբրև լուան Ասունը զըմբռ-  
նունն Բագրատմիյ բորբոքեցան սրտմեսութեամբ յոյժ.  
մինչև սպանին զոստիկանն Ապուսէթ և ցըուեցին զա-

մենայն բաղմութիւն զօրոց նորա : Ի՞նդ այս ցատուցեալ  
Ամիբասկետին առարեաց՝ ի Հայոց զի՞նուկան 850  
անհամար զօրսք : զի կալեալ զբոլոր նախարարն Հայոց  
առաքենցէ առնաս ; իսկ զօրնուիկ՝ որք կարող են սուր  
՚ի ձեռնին առնոււլ կամ սատակեսցէ անխնայ : կամ  
դարձուոցէ յօրէնս Հաղպարացոց : Օ այսու ժամանա  
կաւ երկու զօրաւոր նախարարք Բարկէն Աշուական և  
Գրիգոր Առավան հաւկառակեցան ընդդէմ միմեանց .  
և երկուքն ևս զօրաժողով լեալ սկզան կոտորել զմի-  
մեանս, յոււարի առնուլ զքաղաքս իրերաց, և գերեալ  
զբազումն ՚ի մահ մատնել : Այս երկօրին իշխանք ըլո-  
նաւորը ոչ անոսցին խրամու և յօրգորանաց, մինչև  
Գրիգոր Առավան վիրաւորեցաւ ՚ի մահ ; և Բարկէն  
տիրեաց համայն երկրի նորա :

Իրեւ եկու Բուղայ սկսաւ արեամբ ողղղել զհա-  
յատան : Ուհակէս Աշնտ Արծրունի մեծ իշխան կա-  
մեցաւ պատերակիմիլ ՚ի մարտ ընդդէմ Բուղայի . բայց  
եակո զի նախարարք ոչ յօժարեցան միաբանիլ ընդ  
ինքեան, խորհեցաւ Աշնտ ընծայիւք հաճել զմիտս  
Բուղային, այլ պատրեցաւ, և ՚ի բանաւ արկաւ ամեւ-  
նայն ընտաննեօք իւրովք : Տեսեալ Ամբատայ սպարա-  
պետի զաղէտս թշուառութեան ազգին, և զահի հա-  
րեալ ՚ի հանգերձեալ վշտանգից, գնաց ազնիւ ընծա-  
յիւք առ Բուղայ, և եղեւ առաջնորդ նմա յամենայն  
Ճանապարհորդութիւնն, զի զքարութիւնն՝ զօր եղեալ  
էր ՚ի մաի, գիւրաւ ՚ի գլուխ տարցէ : Կարծէր Ամ-  
բատ՝ թէ վնասելով աղցի իւրոյ, կարէ անձին առնել  
զօգուտ, բայց մշալեցաւ . վասն զի Բուղայ յետ բա-  
զում նախաճիրս արեան գործեցոյ ՚ի մէջ Հայտատանի,  
ոչ զ Ամբատ, այլ զ Աշխի անուն Պարսիկ ոմն եգ վե-  
րակացու Հայաստաննեայց, և ինքն զամենեսեան, ը-  
սրս համեալ էր կենդանւոյն գերի վարեալ տարաւ  
՚ի Բաղդատ (՚ի Բաքէլըն) ընդ որս և զ Ամբատ իշխան :

Իրեւ ետես Ամիբասկետն զգերին յետ խստիւ  
յանդիմաննելոյ զնոսա հրամայեաց զամենեսեան ընդ  
Ամբատայ գնել ՚ի բանաւ և յուսայր զի ուրացին ըզ-  
հաւատս Քքիստանէութեան : Եւ թէպէտ բաղումք ՚ի

նոցանէ առ երեսս ուրացան, և ոմննիք ևս նահատակ կեցան. բայց Վմբատ ստրջացեալ 'ի վերայ անխօհեմ մատնութեան իւրոյ, հասուատուն մնալով 'ի ձաւա տըս իւր, մեռաւ 'ի բանտի անդ, վասն որոյ և կոշեաւ Խոստովանօց:

Եհա օգուտ անմիրաբանութեան, ահա պտուղ չանացելոյ զազգն, ահա հետեանք մնապարծութեան և յանդգնութեան. Վիսվ բանիւ սոքա են գործ անխօհեմութեան և խորին տգիտութեան, որովք ինքեանք զմիմեանս ճանաչել ոչ կամէին. Եւ ներհակ այսմ, յորժամ սկսան զգոյզն ինչ զլոհեմութիւն 'ի կիր առնուլ, յայնժամ կարացին 'ի վերջին թշուառութենէ անտի զազգն վերստին յոտին կացուցանել, և զնոր թագաւորութիւն 'ի ձեռս բերել:



# ՄԵՐՄ ԵՐԻԱԲ Դ.



Ի ԸՆԱՇ ԱՒԹԻՏԻ Ն ԲԱԳԻ ՔԱՏ ՔԱՏՈՒՆԵԱՑ

\*\*\*\*\*

## Տ թ.

Հ. Օ համրդ սկսաւ թագաւորութիւն Բագրա-  
տունեաց :

Պ. Աշոտ իշխան Բագրատունի՝ որդի Ամբատայ  
խոսով լանողի, 'ի ժամանակս վերակացութեան Ծե-  
խեայ ձեռն էարկ խնամարկել շաղկն. նորոգելով զաւե-  
րեալ տեղին, և զամենեսեան 'ի խաղաղութիւն յոր-  
գորելով. նաև հաւատարիմ զանձն իւր ցուցաներ առա-  
ջի տէրութեան Համկաց :

Լուեալ Ամբրագետին զգործս Աշոտոյ՝ կացոյց  
զնա 'ի տեղի Ծեխեայ վերակացու Հայաստանեայց.  
Յայնժամ Աշոտ բազմացոյց զզօրս իւր, և զԱ. բաս-  
եղբայր իւր արար սպասարկետ զօրացն, և 'ի բաց վա-  
րեաց զթշնամիս 'ի Հայաստան աշխարհէ :

Ինդ այն ժամանակս յորժամ նստաւ նոր Ամբ-  
րագետ 'ի Բաղդատ, գերի վարեալ նախարարք Հա-  
յոց խնդրեցին Ամբրագետէն, աղատեցան յարգելա-  
նաց և գարձ արարեալ եկին 'ի Հայաստան. ուր միա-  
բանեալ ընդ Աշոտոյ՝ գուն գործէին կարգաւորել ըդ-  
Հայաստան :

Օ կնի քանի մի ամաց նախարարք խորհուրդ ա-  
րարեալ ընդ Գեորգ կաթողիկոսի խնդրեցին Ամբ-  
րագետէն, զն թագաւորեցուսցէ զԱ. աշոտ Ա. 'ի վերայ  
Հայոց. խոսանակով կալ և մնալ հաւատարիմ յա-  
մենայնի. Ամբրագետն վաղագոյն դիսելով քարելքաւու-  
թիւն Աշոտոյ, համեցաւ ընդ խնդիր նոցու, և առա-

քեաց առ Աշոտ զմժագ վարաւոր և զջիբանի արքայ յական:

1885 Խակ Աշոտ յետ բազում արքական գործոց՝ զաթագաւոր թագաւորութեան իւրայ եղ՝ ի քաղաքն Բագարան, բոլորամբն յազմ եաց թշնամեաց, և եղ ամենայնի զնոր կարգ և կրնոն; Եւ ապա ել և շնչեցաւ՝ ի բոլոր հայաստան, գնաց ևս՝ ի փոքր հայր, և անտե անց՝ ի Պօլիս՝ ի յարդութիւն Աւոնի կայսեր, և մեծաւ վարագ յետս գարձաւ:

Խըրե եհաս Աշոտ՝ ի գաւառն Շիրակայ, անկաւ՝ ի հիւանդաւթիւն մեծ, և վախճանեցաւ, յետ թագաւորելոյ յամս հինգ. ընդ ամենայն վարեալ զիշխանաւթիւն յամս երեսուն: Ապա բարձեալ զմարմբն նորա մեծաշահնդէս յուղացկաւորութեամբ թաղեցին՝ ի Բագարան: Խուռվասից նըւաղեալ էին, ժաղովուրդն՝ ի նախկին թշուառութեանց սարսափեալ, և քանի մի իսոհեմ իշխանք եզեւալ գլուխ ազգին, վերստին սկսան ամբառնալ զգլուխս իւրեանց և վառաւ. ուրիշ. բայց երանի թէ՝ ի մէջ խազազութեան այսպիս մային հաստատաւ:

Հ. Ո՞վ նստաւ թագաւոր հայոց՝ ի տեղի Աշոտոյ Առաջնոյ Բագրատունւոյ:

Պ. Ուրգե նորին Ամբատ Առաջն. բայց Աքաս երայր Աշոտոյ կամելավ թագաւորել ասպատամիթեցաւ. զօրս գումարեալ ել՝ ի պատերազմ ընդդէմ Ամբատայ, և սկսան յերկուց կողմանց հարկանել զերեարս, և բաց սրամառութեան նոցա տուչորեաց զզ եղեցկաւթիւն նորուգ ծաղկեալ թագաւորաթեան: Անհետ Գէորգ կաթողիկոս ընդ մէջ մտեալ հաշտեցոյց զԱքաս, առեալ զեբդումն՝ ի նմանէ. բայց ի միջնոյ Աքաս առոտն էհար զերդումն իւր: Յայնժամ Ամբատ վերստին գիմեաց՝ ի վերայ նորա՝ և նուշանեաց զնա:

Աքաս տակաւին յուղել ի խորհուրդն վատութեան ընդդէմ կաթողիկոսին, և ՚ի պատուհասիլ միաբանեալ ընկերաց իւրոց, ինքն ևս զզապացաւ, և յետ սպասուու մեռաւ: Աւստի Ամբատ կացոյց՝ ի տեղինորա պապարակետ զեբքայր իւր գԸպատհ:

## § Խ.

Հ. Օքնէ երեելք գործս արար Ամբատ Տաղըտ  
տունի՝ ի թագաւորելու իւր:

Պ. Ամբատ՝ որչափի խաչեմութեամբ և քազքրութեամբ  
կամէր կարգաւորել զակը թիւն իւր, ոյնշափ առա-  
ւել ցաւոց հանդիպեցաւ: Քանիզի Ավշին ոստիկան  
Պարսից նախանձեալ ընդ համբաւ բարձրութեամբ Ամ-  
բատոց, կամեցաւ նուածն լ զնա: Եւ ընդ առաջ նո-  
րա Ամբատ երեսուն հազար ընտիր զօրք, և առանց  
պատերազմի քազքրութեամբ իւրակ գիջոյց զցարումն  
նորա, և արարին զհաշառութիւն: Հայոմ ժամանկակի  
բնակիչք Վաւին քաղաքի ապահանքեցան, գնաց Ամ-  
բատ ՚ի վերոյ նոցաւ պաշարեաց զքաղաքն և նուածն աց:  
Տայց յետոյ ՚ի ապահիկ երեաշարքութենէ կործանե-  
ցան բազւմ շնորհածք քաղաքին՝ յորմէ և բազգութք  
կորեան:

Ենտ երկուց պահաց Ավշին գարձեալ գրգռեցու  
՚ի վերաց Ամբատոց: և սուտ համբաւ տարածեալ թէ  
՚ի Հայաստանէ սնցեալ պարտի երթալ յայլ ոահ-  
ման, եմուտ ՚ի Հայաստան: Ամբատ ոչ ունելով ըզ-  
պատրաստութիւնն նախ խոյս ետ յամութ տեզին ցէո-  
զոմիւլ զօրքացն: և ապա եհաս զօրքան՝ ՚ի Ասխիջեան՝ ան-  
կառ ՚ի վերոյ Ավշին եհար զզօրս նորա, և զմնացեալ-  
որն արար ցիրեցան՝ իսկ զԱվշին վարեաց ՚ի փախուստ:

Աշատ քեռորդի Ամբատոց իշխան Աասպուրա-  
կանի՝ տեսեալ թէ Ավշին թշնամոցեալ է ընդ Ամ-  
բատոց և կամի գարան գործել նմա, խորհեցաւ սո-  
վու վասս ստանալ: Ուստի ապաստմբեցաւ ՚ի Ամբա-  
տոց և գնաց բազւմ ընծայինք առ Ավշին յուոով  
թագաւորելով: բայց յայս նորա եւ ՚ի նոնիր զէ Ավ-  
շին ոչ երեսու արարեալ բանից նորա, գարձոյց զնա  
յետս ՚ի տեղի իւր ունացն:

Բնդ սաս գործ Աշատոց գժգմնեալ աներ նորա  
Աշատիկ՝ կալեալ կապեաց զնա հանդերձ երկու եղ-  
բարբք նորին և եղ՝ ՚ի բանտի, և ինքն տիրեաց Աա-

պուրական աշխարհին:

Յետ այսորիկ Ահմատ ոստիկան Միջագետաց  
896 ապատամբեցաւ յԱմիրապետէ իւրմէ, և սկսաւ խաղալ  
'ի վերայ Հայաստանի: Ամբատ ևս ել ընդդէմ նորա  
վաթուուն հազարօք. իսկ Գագիկ աներ Եշտոյ բանս  
եղ զանխուլ ընդ Ահմատայ, մատնել զօրս Հայոց  
'ի ձեռս նորա զի թերես ձեռամբ նորա հասցէ թա-  
գաւորութեան: Ճշ խորհուրդ ետ Ամբատայ զի բանա-  
կեսցի մօտ 'ի գիւղն Հայոց, և ապա թագուն ծանոյց  
Ահմատայ զարմարաւոր տեղին գարսնի: և ինքն ա-  
ռաջնորդեալ Ամբատայ էած զզօրսն 'ի մացառուտ և  
յապառած վայրս, մինչ զի զգիշեցն ողջոյն վաստակա-  
րեկ ուղևորութեամբ հազիւ հազ ընդ առաւոան հա-  
սին 'ի աեղի մի մօտ 'ի բանակն Ահմատայ. և իրեւ  
կամէին ոգի առնուլ և ննջել, յանկարծակի եհաս 'ի  
վերայ նոցա Ահմատ. և թէպէտ անախուունելի գի-  
պու ածոյ պատահեցան զքք Ամբատայ, ասկայն քա-  
ջութեամբ պատերազմեալ յազգեցին:

Տեսէալ Գագիկայ թէ յոյս իւր 'ի նանիր ելա-  
նէ, նենգութեամբ զերեկիւղ եցոյց յինքեան, և յոր-  
դորեաց զամենեսին գառնալ 'ի փախուտ, այսուժոու-  
րամանկութեամբ նորա ցրաւեցաւ բոլըր բանակն Հա-  
յոց: Ահմատ ևս զահի հարեալ զի մի յոյլ և այլ  
կողմանց 'ի վերայ յարձակեսցին Հայք, գարձու գնաց  
'ի տեղի իւր: Իսկ Գագիկ քնիալաւ զփոխարէինն չա-  
րութեան իւրօյ. զի 'ի կատարել նորա զուարձութեամբ  
զհանգէս ու բախութեան ընդ անզգամութիւն իւր՝  
քեռարդի Ամբատայ սպան զնա յասպարիզի անդ:

Հ. Օի՞ նչ չորսիս գործեաց Ամբատ ընդդէմ Ամբա-  
տայ յետ պարտելոյն 'ի նունի:

Պ. Ամբատ զինի պարտելոյ 'ի Ամբատայ ոխս ու-  
նելով ընդ նմա, ժամանակ պատեհ որսնիր նուածել զիս,  
ուստի յորժամ յուաւ գլխարանջէլ և զցրուիլ զօրաց  
Ամբատայ, դարձեալ և կի բազմութեամբ 'ի վերայ նո-  
րա: Ամբատ կամէր ունիլ զդէմ նորա. բոյց ովլ բռ-  
նա ճանաչէր թագաւոր ինքեան: Թէպէտ թագաւորն  
ծանոյց վաղվաղակի նախարարաց իւրօյ, զի եկեալ օռ-

զովեսցին 'ի մի. սակայն ոչ ոք անապաց բանից նորա, և  
ոչ շարժեցան 'ի տեղութէ իւրեանց. Ա ասն որոց Ամ-  
բատ սախալեցաւ զհաշտութիւն խօսիլ ընդ Ափնի՝  
տալով նմա պատահով զօրդի իւր և զեղուր որդին. Ըստ  
շնե յափշտակեաց զթագուհին և զհարսն թագաւորին:  
Եւ յօրժամ զառաւել ևս չարիս խորհէր հասուցա-  
նել Ամբատայ, ինքն չարացար սատակեցաւ. և 'ի ձե-  
ապաց նորա աղատեցան պատահովն և թագուհին:

## § Խ Ե.

Հ. Եւ մահուանն Ափնայ կարա՞յ Ամբատ թագաւ-  
որել անդոքը:

Պ. Աչ. Չի թէպէտ ոստիկանն փոխեցաւ, բայց ազգ-  
իւր 'ի նոյնութեան կայր և մայր: 'Սոսաւ 'ի տեղի  
Ափնի Յուսուփի եղուայր նորա՝ այր չար և նենգաւոր  
Ամբատ արքոյ կամելով աղատ կալ յոստիկանաց, ո-  
րով կամ զհարկ աշխարհին 'ի ձեռն ոստիկանաց առա-  
քէր, ինդը եաց յիշ միրակետէն զհարկ աշխարհին ող.  
Դակի առ նա առաքել: Ինդ այս զարեալ Յուսփայ,  
գումարեալ առ ինքն զզօրս գիւմեաց 'ի Կուլին քաղաք.  
բայց Ամբատ խաղաղացոյց զնա, և եգեալ ընդ նմա  
զգաշն սիրոյ յետո գարձոյց մեծարանօք:

Եւ քանի մի ամաց խաղաղութեան երկրէ մե-  
րոյ թագաւորն Ագերացւոց խաղաց զօրօք գէպ 'ի Հա-  
յաստան. յայնժամ Ամբատ միաբանեալ ընդ Ատր-  
նեսեհի արքային Արաց, զոր ինքն թագաւորեցոյց, 'ի  
նեղ արկին զնա, և իրեւ խնդրեացնա զհաշտութիւն,  
Ամբատ առաքեաց առ նա զ Ատրնեսեհ հանդերձնա-  
խարարօք Հայոց 'ի հաստատել զգաշն. բայց Ատր-  
նեսեհ ետ ըմբռնել զնա և երեր առ Ամբատ: Ամբատ  
գոլով 'ի ընէ գթասիրտ և իմացեալ զի Ագերացիք  
վշտացեալ տեսանեն զնոր պատրաստուի. յետ չորից  
ամսոց պահելոյ զնա փառօք 'ի մէջ Անի ամրոցի՝ ար-  
ձակեաց. զի երթեալ թագաւորեցէ 'ի վերայ ազգի  
իւրոյ: Ինդ այս զայրացաւ Ատրնեսեհ. և բաղումը  
'ի նախարարաց Հայոց արդէն թշնամացեալ գոլով ը-

գէմ Ամբատայ, միաբանեցանընդ Վարերսէ հի և խոր-  
հէին սպանանել զԱմբատ. բայց ինքեանիք անկան 'ի  
նոյն որոգայթ ծաղք և ծանակ եղեն, և սկսան յոցա-  
նի պատերտղմլ, և բոլըսովին յաղթեցան: Յայնժամ  
Վարներսէ ապաւինեալ 'ի գթութիւն Ամբատայ՝  
էառ զթողութիւն յանցանաց իւրոց, և մատնեաց 'ի  
ձեռս Ամբատայ զապսուամբ նախարարս: զօրս կուրա-  
ցց Ամբատ:

Հ. Չինի յաղթելոյ Վարներսէ հի 'ի Ամբատայ  
ո՞ 'ի նախարարաց զարիս խորհեցաւ ընդդէմ Ամբա-  
տայ:

Պ. Գագիկ Վարծրունի քեռորդի իւր 'ի գոյզն ինչ  
հանդարտիլ Ամբատայ, անյ ստումբեցաւ 'ի նմանէ և  
գնաց առ Յուսուփ ամբատան եղեւ զԱմբատայ: Յու-  
սուփ 'ի մաի ունելով զառովութիւն իմն յարուցանել  
'ի Հայաստան, զԳագիկ թագաւորեցոյց: Յայս լու-  
եալ Ամբատայ՝ ծանեաւ զվտանդ աշխարհին, առա-  
քեաց առ Յուսուփ զՅանհնէս կամքողիս բազում  
պարգեղք, հաշտեցուցանել զնա ընդ իւր: Յուսուփ  
եդ զՀայրապեամ 'ի խաւարային բանտի, և 'ի գտլ  
գարնայնոյ առեալ ը իւր զԳագիկ դիմեաց 'ի Հայու-  
սկսան հիմն 'ի վեր տապալել զաշխարհս մեր, հարին  
և հարան, և զբազում անմեղ արիւնս հեղին, յու-  
լովս 'ի գերութիւն վարեցին: ուստի և բաղումք յիշ-  
խանաց յուսահատեալ անձնատութ եղեն Յուսուփ:  
յորոց մի էր Վաշոտ սպարապետ եղբօք որդի Ամբատայ:

Տեսեալ Ամբատայ թէ չեք դարման չարեացն՝ խոյն  
ետ յաշխարհն Գաւոգարաց, և անդ թագեաւ:

Յերկըսրգում ամի Գագիկ և Յուսուփի պատ-  
րաստեցան 'ի կռիւ ընդդէմ Ամբատայ. Ամբատ զօրս  
ժաղովեալ ետ 'ի ձեռն երկուց որդւոց իւրոց Վաշոյ  
և Վաշեղի. որք ուժգինս հարին զթշնամիս. բայց  
Վեաւորդիք կանխաւ բանս եղեալ ընդ Յուսուփ: 'ի  
ժամ զոռ մարտին 'ի գնդէ իւրեանց ելին, և սկսան  
'ի փախուստ գաւնաւ: Յայնժամ Վաշոտ և Վաշեղ  
տակաւաթիւն զօրոք արիմբեար ձեղեալ զգունդ թշնա-

մեաց, անցեալ ընդ մէջ նոցա փախեան։ Բայց ոմանկը՝ ի Անուրդդեաց՝ ի գարանի մտեալ, կալան զ Առշեղ և տարան առ Յուսուփի. զոր ընդ այլ բաղում անձ նատուր նախարարաց ետ սպանանել։ իսկ զօքք նորա սիուեալ ընդ ամենայն տեղիս, արեամբ ոռոգեցին ըզբ բոլոր աշխարհու մեր։

Հ. Արակէս վարեաց Ամբատ Բագրատոնի զվերջին աւուրս կենաց իւրոց, և որպիսի՞ մահուամբ մեռաւ։

Պ. Ամբատ՝ յետ մատնելոյ Գագիոյ Արծրունւոյ զինքն, ոչ եգիտ զհանգուսութիւն մինչև ցվերջին կէտ ողբալի մահուան իւրոյ։ Խշանք Ա ասպուրականի՝ Գագիկ և Գուրգէն եղբայր նորա անսեալ զի միւրք Յուսուփի չարիս հակամատեալ էին, և կամի սպանանել զնոսա. խորհելով զօդուտ անձանց իւրեանց, բայց՝ ի տարսումամու՝ ի ծածուկ յայտ արարին Ամբատայ՝ թէ կամին լինել նմա օդնական։ Աակայն Ամբատ յուսահատեալ էր. և զօրք իւր ցրուեալ էին. ուստի ոչ գտեալ զայլ իմն հնարօ մեկնեցաւ՝ ի բերդն կապոյտ, որ՝ ի գաւառին Արարատայ։

Ի սմին ժամանակի Յուսուփի կամելով ինպն լինիլ տէր Հայաստանի, դիմեաց նախ՝ ի վելոյ Ամբատայ և արաշարեաց զերդն կապոյտ։ Յորժամ՝ ոկսաւ սաստիկ կոտորած յերկուց կողմանց, Ամբատ առեալ զյետկար երդման՝ ի Յուսուփի, զի մի՛ մնաս ինչ առնիցէ ինքեան, ել և գնաց առ Յուսուփի։ Յուսուփի առ երեսս զ Ամբատ պատուով ընկալաւ. բոյց կասկածեալ Ամբատայ հրաման էառ՝ ի նմանէ և չոքաւ՝ ի գաւառն Շիրակ, հուսկ ուրեմն Գագիկ և Գուրգէն զերծեալ՝ ի Յուսուփի գախեան՝ ի Ա ասպուրական աշխարհ։ և անկան յամուր բերդս իւրեանց։ Ինդ այս գաւառացեալ Յուսուփի կապեաց՝ ի շղթայս զմնացեալ նախարարոն, և եդ՝ ի բանտի։ իսկ զ Ամբատ խարդախութեամբ հրաւիրեալ առ ինքնն, կապեաց՝ ի շղթայս և տարաւ ընդ իւր՝ ի Գուրին քաղաք. և եդ՝ ի խոր բանտի։ Օկնի տանջելոյ անդէն Ամբատայ առանց անկողնոյ գետնախշտի միայն լոկ հացիւ և ջրով զամ-

մի. Յուսուփի էառ զնա ընդ իւր և գնաց զօրոք՝ ի վեց  
բայ ամրոցին Երնջակայ. ուր զօղեալ կային յոլովնա-  
խարարք: Եւ իրբե ոչ կարաց ստնանել ամիսցին կա-  
ցոյց զԱմբատ յանդիման Հայոց եղելոց՝ ի նմա: և  
հրամայեաց գան հարկանել զնա, այպն առնել և ծի-  
ծաղիլ զնովաւ. և ապա ետ՝ ի ձեռս դահճաց, զե  
շարաչար տանջնեսցեն զնա, մինչեւ ուրացի զհաւատս  
կամ մեռցի. և այնպէս խողխողեալ հատին զգլուխ  
նորա, և տարեալ զմարմինն՝ ի Դրուին պրկեցին՝ ի  
փայտի իրբե՝ ի խաչ: յորմէ բազում ոքանչելք ե-  
զեն, և ոմանք՝ ի Տաճկաց գարձան՝ ի հաւատս Վը-  
րիստոսի:

Կայսպիսի խոհեմ, խաղաղասէր և բարեպաշտ  
թագաւորն զամո քսան և չորս դժբաղդութեամբ թա-  
գաւորեաց. իւրով թշուառութեամբ բազում սրտից  
ցաւ և սարսափ սլատճառեալ մեռաւ. ինքն ընկալաւ  
զմարձս իւրոց վաստակաց. բայց ազգն առաւել ևս ան-  
կաւ՝ ի թշուառութիւն. ինքն որշափ ջանաց զբարիս  
առնել ազգին, այնչափ ազգն ընդդէմ եկաց նմա:  
Եւ եթէ ուշի ուշավ զմտաւ ածցուք՝ սպանողը Ամբա-  
տայ այնչափ դառն տանջանօք էին նախարարք մեր. իսկ  
Յուսուփի էր միայն գործի կամաց նոցա:

### § ԽՄ.

Հ. Օքանը եղեւ վիճակ Հայոց յետ մահուան Արմ-  
բատայ:

Պ. Դ մեռանիլ Ամբատայ արքայի՝ Հայք ևս սկը-  
սան ջանալ առաւել քան զառաւել թշուառացուցա-  
նել զինքեանս: Դ միում գիշերի՝ ի ծածուկ մասնե-  
ցին զբերդն Երնջակի՝ ի ձեռս զօրաց Յուսուփայ, ուրք  
մտեալ՝ ի գերի վարեցին զորս կամեցան և զմնացեալն  
առ հասարակ կոտորեցին. այնուհետև Յուսուփի պա-  
հապանս եղեալ՝ ի վերայ ամենայն քաղաքաց, էառ  
զբազմութիւն գերեաց և դարձաւ յԱտրպատական գա-  
ւառ:

914 Զ այսու ժամանակաւ Աշուա Բ. որդի Ամբա-

տայ (որ Երկաթն կոչվել) միայն զվեց հարիւր արս հը-  
զօրս գտեալ ընդ ինքեան միաբան, դիմեաց ՛ ամենայն  
կողմանս աշխարհին Հայոց, մի առ մի եհար կոտորեաց  
զջօրս Յուսփայ, և ինքն եգեալ պահապան յամենե-  
սին սկսաւ տիրել Հայաստանեայց: Օայց տեսեալ  
ումանց 'ի նախարարաց Հայոց, ժաղավեցան, իմիասին և  
թագաւորեցաւցին զնա 'ի տեղի հօր իւրոյ: Ոմէպէտ  
արարք Աշոտոյ Երկաթի 'ի վեր էին քան զմիտու, և  
թշուառ ազգի իւրոյ մեծ ինչ միսիթարութիւն: բայց  
յայտ է զի թէ և լուցցես զմեծ բոց, սակայն զկնի միոյ  
աւուր 'ի պահասիլ նիւթոյ շինանի: այլ ոչ երեկ  
շինաւ հրդեհ չար նախանձու ազգի մերոյ, և ոչ դա-  
դարեցաւ յայրելոյ զանձինս և զազդն ողջոյն: Ոմանք  
'ի նախարարաց նախանձեցան ընդ Աշոտ Երկաթ, և  
սկսան յառնել 'ի վերայ միմեանց և 'ի վերայ Աշ-  
տոյ, և այսպէս արեամբ ողաղեցին զՀայաստան:

1. ուեալ Յուսփայ զայն ամենայն՝ վերստին դիւ 916  
մեաց զօրք 'ի Հայաստան, և զանպատմելի չարտ-  
թիւնս հասուցեալ ազգի մերոյ՝ ստիպեաց զամենեսին  
յուրացութիւն հաւատոյ, ուր և բազումիք մարտիւրո-  
սացան: Տեսեալ շրջակայ ազգաց զաւերած Հայաստա-  
նի, ինքեանք ևս յարձակեցան 'ի վերայ. 'ի միոյ կող-  
մանէ Յուսուփի, և 'ի միւսմէ կողմանէ օտար թշնամիք,  
իսկ 'ի ներբուատ նախարարք գոգ խորհրդակցեալ ՛  
միմեանս սկսան հիմն 'ի վեր տապալել զՀայաստան.  
և ծծել զարիւնս միմեանց: Այսու պատճառաւ երկ-  
րագործութիւնն բոլորովին դադարեցաւ և եղե սով-  
սաստիկ, յորմէ բազումիք մեռան:

2. Օ ի՞նչ վախճան կալաւ Գագիկ Աքծրունի  
բռնի թագաւոր կարգեալ 'ի Յուսփայ:

Պ. Գագիկ բռնաւոր՝ յետ յարուցանելոյ զբազում  
խուլութիւնս, ոչ կարացեալ համարձակ տիրել հա-  
մօքէն ազգի մերոյ, բռնի ինքնագլուխ իշխեաց 'ի վե-  
րայ մասին նախարարութեան իւրոյ 'ի Աստպուրա-  
կան գաւառի: Ամբատ թագաւոր՝ որ զնազազութիւն  
և զհանգստութիւն ազգի իւրոյ որոնէր, ծանեաւ՝ զի  
մտք Գագիկայ ձկտի զհետ միտուամիրութեան, և ան-

մարթ է համոզել զնա, յետս կալ՝ ի բոհաւորութենէն. վասն որոյ զհաշտութիւն խօսեցաւ ընդ նմա. և այնպէս Պագիկ և որդիք իւր մի զկնի միոյ թագաւոր անուամբ ինքնագլուխ տիրեցին Ա ասպուրականի, ջանալով բազմամարդացուցանել և պաշտպանել զընկերս իւրեանց՝ ի թշնամեաց որչափ ձեռնհամ լլնէին. Յորժամ մեռաւ Պագիկ. նմա յաջորդեաց որդինորա Դերենիկ ամս տառն և վեց. յետնորա թագաւորեաց կրտսեր եղբայր նորա Արուսահլ Համազապ ամս տառն և ինն. Ամա յաջորդեցին երեք որդիքն՝ ի միասին Աշոտ, Գուրգէն և Անեքերիմ. Յորժամ Անեքերիմ մնաց միայն. զտէրութիւն իւր յանձնեաց Յունաց և ինքն գնաց նստաւ՝ ի Աերաստիա քաղաքի. Անդ յաջորդեաց նմա որդի իւր Պաւիլթ, և յետ Պաւիլթ այ կալան զթագաւորութիւնն որդիքն նորա Առաում և Արուսահլ. և անդանօր գաղաքեցաւ ալբայական ցեղն Արծրունեաց և ընդ նմա անուն թագաւորութեան:

Հ. Երբ Հայաստան ալէկոծեալ ծփիւր Աշոտ Երկաթ յաւմեն եղիս զոդնութիւն ինքեան.

921 Պ. ՚Ի Կոստանդին կայսերէ Յունաց Պերփեռուժէնաց. որ աղաշանօք Յովհաննէս կաթողիկոսի կոշեաց զԱշոտ առ ինքն. և մեծ պատիւ ցուցեալ նմա, քազմաթիւ զօրօք Յունաց առաքեաց՝ ի Հայս զի մաքրեսցէ զՀայաստան՝ ի թշնամեաց. — Բայց երբ թշնամիք տանն ընտանիք նորա իցեն, զո՞ր օգուտ կարեն բերել օտարք:

Վանդի յորժամ դարձ արարեալ Աշոտոյ Երկաթի գայր՝ ՚ի Հայաստան. ընակիչք կրղբ քաղաքին գիմամարտութեամբ վառեցան ընդգէմ նորա. սակայն Աշոտ յաղթեալ նոցա եկն և եգ զաթոռ իւր յերազգաւորս. Յայնժամ զահի հարեալ Յուսիայ՝ թէ Աշոտ օգնականութեամբ զօրաց Յունաց զբոլոք Հայաստան կորդելոց է. յինքենէ. և ծանուցեալ իսկ էր զընութիւն Հայոց. զի երբէք միմեանց ոչ հաւանին, այլ միշտ յօժարակամ են՝ զմիմեանս հալածել և ճառայել օտար ազգաց. Ա ասն այսորիկ զԱշոտ զհօք

եղթօք որդի Աշոտոյ Երկաթի անուանեաց Թագաւոր.  
և առաջեաց զնոս՝ ի Հայաստան, զի Հայք զմիմեանս  
կոտորելով տկարացին և անկցին՝ ի գօրութենէ. և  
ինքն ըստ հաճոյից իւրոց խաղ առնիցէ զնոքք,  
Յնդում պատմուե գրեալ է, թէ՝ ի ժամանակս պատ-  
տիկ թշուառութեան ազգի փոխանակ միաբանութեան  
և զգէմ թշուառութեան զնոսը իմն առիթ թշուառութեան, նըս-  
տուցանելով և զայլ ևս երկուս բռնաւոր Թագաւորս  
հակառակ միմեանց: Ովորմելի ազգն ոչ գիտէր ար-  
դեօք որում թագաւորի հնազանդեսցի. ընդդէմ որոյ  
պատերազմեսցի, և՝ ի բռնաւթենէ որոյ անձնապահ  
լինիցի. մանաւանդ յայնմ ժամու յոգժամ՝ ի չորից  
կողմանց պաշարեալ էր յօաար թշնամեաց. Ուստի  
վառեցաւ բորբռքեցաւ՝ ի մէջ նոցա պատերազմ սաս-  
տիկ: ՚ի ոմնի ժամանակի Ա ասակ իշխան Գուգարաց  
ապստամբեցաւ՝ ի միւս կողմանէ և սկսաւ պատերազ-  
միլ: Եւ այսպէս զինի բազումն կոտորեքյ զմիմեանոր  
Յովհաննէս կաթողիկոս հազիւ հազ կարաց զհաշտու-  
թիւն առնել՝ ի մէջ նոցա: Բայց Աշոտ բռնաւոր վե-  
րստին սկսաւ պատերազմիլ, մինչև Յովհաննէս կա-  
թողիկոս միւսանգամ ընդ մէջ մտեալ խաղացոյց:

## § ԽՕԳ.

Հ. Յորչանի ժամանակս մնաց Հայաստան՝ ի մէջ  
խաղաղութեան զինի հաշտութեան Աշոտոյ Երկաթի  
ընդ բռնաւոր Աշոտոյ:

Պ. Կարի սակաւ: Ա ասն զի յայնմ ժամանակի  
երբ դայզն ինչ խաղաղութիւն տիրեաց Հայաստանի  
Աշոտ Երկաթ կատարեաց զհանդէս իւքոյ հարսնու-  
թեան և Յօւսուփ՝ ի մտի ունելով ապստամբիլ Քո-  
միրապետին արաք զսերտ բարեկամութիւն ընդ Աշո-  
տոյ, և զթագաւորի առաքեաց առնա զթագ: Զկնի  
սուզ ինչ առուրց Աշոտ բռնաւոր նորոգ երրորդ ան-  
գամ ապստամբեցաւ, և եքաց զպատերազմ ընդդէմ  
Աշոտոյ Երկաթի. յօրմ; Եղե մեծ կստօրած յերկուց

կողմանց. մինչև վերստին Յովհաննէս կաթողիկոս հաշտեցոյց զնոսա ընդ միմնանս, Յայնմ ժամանակի ապստամբեցաւ Առաջին իշխան Աւտիացւոց : Աշոտ յերազմից համոզելոյ զնա, իբրև ոչ անսաց նմա, դիմեաց՝ ի վերայ նորա, եհար և խորտակեաց զզօրս նորա, և զ Առաջին վիրաւորեալ կալաւ՝ ի մարտի անդ, և կաւըացոյց զաջո նորա: Յայց ինքն Աշոտ ամեննեին ոչ եգիտ զհանգստութիւն. քանզի ոգի ապստամբութեան մտեալ էր՝ ի սիրտո ամենայն նախարարաց. մինչև Արաս եղբայր իւր նախանձեալ ընդ նմա ապստամբեցաւ. և հազիւ Աշոտ երկիցս վիկեաց զանձն իւր քաջութեամբ՝ ի մեծ վտանգից, և ապա բարձի թողի արարեալ մեկուսացաւ հարիւր արամբ՝ ի Աւան կղզի :

Հ. Այլ են վտանգք. յորոց ազատեցաւ Աշոտ Երկամբ իւրուլ քաջութեամբ:

Պ. Առաջինն է՝ յորժամ Աասակ իշխան Գուղարաց ապստամբեցաւ և կայր յամուր բերդն Յամշոււդէգէ, Աշոտ արքայ խողաց՝ ի վերայ նորա. և ոչ կարացեալ յառաջնորմ նուագի առնուր զբերդն, սրբուեաց զզօրս իւր յայլ և այլ տեղիս առ՝ ի գտանելոյ զպաշար կերակրայ, և ինքն երկերիւր յիսուն արամբք չոքաւ մոտ յամուրն Ասկուրէթ և ոգի առնոյր. զայս իմացեալ Աասակայ հապճեպ չորս հազար արամբ եկեալ պաշարեաց շուրջանակի զ Աշոտ արքայ. Յուարեցաւ Աշոտ՝ և միանգամայն արիացաւ յորդորեաց զիւրսն, յարձակեցաւ՝ ի վերայ թշնամեացն և՝ ի քթթել ական շփոշեալ զթանձրութիւն ամբոխից նոցա վանեաց և մզեաց զնոսա ընդ կրունկն. և յաղմիւլ նոցամաշեաց զբաղւումն՝ ի նոցանէ՝ ի բերան սրոյ, զբաղումն ձերբակալ արար՝ ի նոցանէ. և զանհաւատից կտրեաց զունչն և զականջս. իսկ զհաւատացեալսն մերկացուցեալ յամենայնէ արձակեաց՝ ի բաց: Յայսմ վայրի Աասակ զզջացաւ, և եկն ինքնին առ Աշոտ ինդրել զթաղութիւն. Աշոտ ներեալ յանցանաց նորա վերատին կացոյց վնա իշխան աշխարհին Գուգարաց.

Երկորդ՝ իբրև լուաւ Աշոտ Երկամբ թէ Ա-

հակ աներ իւր ապստամբեալ ութն հազար արամբ  
զբազում վնասս չարեաց գործէ 'ի գաւառին Աւտէաց-  
ւոց. նաև գրաւեաց յինքն զբերդն Աշոտյ վԱյեան  
(Պարուշան) ինքն ևս հարիւր քաջարի զօրք եհաս տագ-  
նապաւ 'ի Զորտիոր գաւառ. և զի վաստակեալ էին  
զօրք իւր, ել 'ի քարաժայո բլբակին և դադարեցաւ  
անդ. իսկ 'ի ծագիւ արշալուոյ գեսպանս արձակեաց  
Աշոտ առ Աահակ՝ զեպիսկոպոս իւր զի դադարեցի  
'ի չարեաց իւրոց: Խակ Աահակ արգելեալ առ ինքն  
զպատգամաւոր զեպիսկոպոսն յանկարծակի ամենայն  
զօրք իւրովը յարձակեցաւ 'ի վերայ Աշոտոյ, և պա-  
շարեաց զբլբակն: Աշենչ լքաւ Աշոտ 'ի պատկուցա-  
նող տեսարանէն, այլ թողեալ անդր 'ի վաստակա-  
բեկ զօրաց իւրոց զհարիւր արս, և ինքն էջ տնտի եր-  
կերիւրօք միայն, և հանեալ 'ի ծոցոյ իւրմէ զյետկար  
երդման զտուեալն 'ի Աահակայ տարածեւոց առաջի  
Աշտուծոյ. և ապա կապեալ զայն 'ի պատուանդան  
սրբոյ խաչին յարձակեցաւ 'ի վերայ նոցա. և զբազում  
նախճիրս արեան գործեալ կալաւ զԱահակ և զորդի  
նորա զԳրիգոր կուրացոյց զաւ նոցա. և արձակեաց  
գնալ ուր և կամիցին:

Երրորդ քաջութիւն Աշոտոյ եղւ այն, զի յոր-  
ժամ ապստամբեցաւ յինքենէ Հյլիկ Ամբամ իշխան  
Աւտէացւոց, Աշոտ Երկաթ ոչինչ գիտելով զնմանէ  
չու տրար գնալ յԱւտի աշխարհ իբր 'ի զբոսանս. և  
անդ իբրև լուաւ զապստամբութիւն նորա, չոքաւ առ  
արքայն Եգերացւոց, էառ 'ի նմանէ զզօրս յօդնակա-  
նութիւն և գիմեաց 'ի վերայ Հյլիկայ՝որ կայր 'ի դա-  
րանս բազում զօրք 'ի մէջ անտառախիտ մոյքեաց  
Հայնժամ կամուլով Աշոտոյ զանկասկած տեղի ընտ-  
րել 'ի դադար զօրացն՝ ել ընդ անցուկ կիրճն և ե-  
մուտ յամբոց մի: Օայս իմացեալ Հյլիկ Ամբամայ  
եկն և կալաւ զկիրճն, զի Աշոտ ոչ ունելով զպա-  
շար փութով անձնատուր լիցի: Տեսեալ զօրացն Ա-  
շոտոյ զվտանգմն, առ ժաման զչարութեան խորհեցան  
զիսորհուրդ 'ի միջի իւրեանց. կապէլ յայնմ գիշերի  
Աշոտ և տալ 'ի ձեռռ Ամբամայ, զի ինքեանք ա-

զատեսցին։ Խմացեալ Աշոտյ Երկաթի զմբոս զօրաց  
իւրոց, 'ի մէջ գէշեսի յանկարծ հեծեալ յօդապարիկ  
երիշար իւր գիմեաց յանցո ամլոցին ձեղքեալ հախ  
զզօրս իւր՝ որ կալեալ էին զանցո կրծին, և եհաս  
'ի բանակ թշնամւոյն եհար ցըռւեաց զամնեսնեան և  
անց դնաց յամբոցն Կաքաւաքար. և անտի առեալ ը  
իւր զհարիւր արս, չպաւ առանձնացաւ 'ի Աւան կրպ-  
զի. և սկսաւ ողբալ զթշուառութիւն աղբի իւրոյ,  
զանհնաղանդ բնութիւն ժողովրդեան, զնախանձոտ և  
զանմիաբան կամս իշխանաց, ևո և զանհաւատարմու-  
թիւն զօրաց։ Խոկ այլ նախարարք մեկուսացեալ յեր-  
կիր իւրեանց կային յանհոգութեան, առաւել 'ի մի-  
մեանց զարհուրեալք քան թէ 'ի թշնամեաց։

Կրթութիւնն է՝ որ սանձահարէ զգաղանաբարոյ  
կատաղութիւն մարդոյ, և առաջնորդէ 'ի կիր առնու-  
լ զքաղաքավարութիւնս. ճանաչել զմեծութիւն Աստու-  
ծոյ, զկարդ ամենեցուն և զչափ անձին իւրոյ. 'Ի պա-  
կասիլ կրթութեան անդրէն կորուսանէ մարդ զչափ  
իւր, և սկսանի գաղանաբար վնասել աղգի իւրոյ. սի-  
րէ զչարիս գործել անձին իւրոյ և ընկերացն։

Յոյսմ ժամանակի Գեորգ Վարդպետունի քը-  
սան արամի շըֆէր աստ և անդ. և երեմն յանկարծ  
շահատակեալ 'ի վերայ թշնամեաց զքաղում կոտորած ա-  
ռանէր։

### § ԽՌԴ.

Հ. Օ կմըրդ կառավարիւր Հայաստան զկնի մեկու-  
սանալոյ Աշոտյ Երկաթի 'ի Աւան կղզի։

Պ. Յուտուփ ոստիկան Պարսից առաքեաց 'ի Հա-  
յաստան զվերակացու ոմն Ելսոր անուն. միտք և գի-  
տաւորութիւնք այսոր վերակացուի ոչ այլ ինչ էին,  
քայց եթէ հարկանել, կեղեքել, յափշտակել և կոր-  
ծանել։ Յայնժամ մատեաւ առ նա Բարեկէն Ախս-  
կեան և շարախօս եղե զեղօրէ իւրմէ զ Վահակաց.  
և Ելսոր կեղծեալ բարեկամութեամբ կոչեաց առ ին-  
քըն ՀԱՄՀԱԿ իշխան, և զկնի լսելոյ զառիթս կուտոցն։

զերկոսին միանգամայն կապեալ՝ ի շղթայս եղ՝ ի բանտի, և ղկաթողիկոսարանն Իւռնոյ արարեալ իւր պատառ՝ խորհեքը ըմբռնել զկաթողիկոսն։ Ապա իրազեկ լեալ թէ՝ Յօհաննէն կաթողիկոս առանձնացեալ է յամբոցն Իիւրակն, առաքեաց՝ ի վերայ նորա զզօրս։ Փախեաւ կաթողիկոսն, բայց բնակիչք բերդին դարձան ընդդէմ զօրացն եկելց, և զաւուրս եօթն մարտեգեալ ընդ նսան՝ կոտորեցին զբազումս՝ ի նոցանէ։ այլ մի ոմն՝ ի զօրաց ամրոցին գաղտնի մատնեաց՝ ի գիշերի զամբոցն։ և ընդ այլ բոլոր բնակիչաց անօրէն մատնիչն ես՝ ի սուր սուսերի Յըսրոյ մաշեցաւ. և բազումը ես նահատակեցան վասն ընդունելը զկրօնա Վահմէտի։

Ի նոյն աւուրս յետս կոչեցաւ Յըսր. և՝ ի տեղի նորա եկն Իըշը վերակացու, որ կամէը երթալ՝ ի Աւան կրղի՝ և ունիլ զԻշտ Երկաթ. բայց՝ ի ճանապարհի պատահեցաւ սակաւ զօրաց Գհորդգայ Վարզպետունւց և ընկալաւ՝ ի նոցանէ զսաստիկ կոտորածս։ Իբրև յանհնարինս կատաղեալ Իըշրոյ եհաս մերձ՝ ի ծովն Գեղամայ՝ Աշոտ Երկաթ տեսեալ զմօտալուտ վանդն վաղվաղակի պատրաստեալ զտանն նաւս եօթն եօթն արամբք, վարեաց զնաւսն՝ ի վերայ ծովուն և պատերազմեցաւ ընդդէմ նոցա նետաձգութեամբ։ Իբրև նորա սկսան շփոթիլ սլացաւ Աշոտ՝ ի վերայ նոցա եհար և ցրուեաց զբանակն սղջոյն։ և զաւարս բնալումս առեալ դարձաւ՝ ի կրղին։

Խոկ Իըշը յետ զաւերածութիւնս և զկոտորածս առնելոյ՝ ի վերայ քանի մի ամրոցաց՝ յետս կոչեցաւ յՄիջրապետին։ ի տեղի նորա վերստին եկն Յըսր և սկսաւ դոյզն ինչ խաղաղութեամբ կառավարել զաշիարհ։

Օպյուր ժամանակաւ բռնաւորն Գագիկ կառավարէք ընդարձակարար զերկիք իւր։ Աշոտ Երկաթ տեսեալ թէ դոյզն ինչ խաղաղութիւն եղեւ աշխարհի մերոյ, եւ և ձեռն էարկ զհոռ տանել վասն տէրութեան, և ընդ Աքառոյ եղբօր իւրոյ խօսեցաւ ըզհաշտութիւն։ Այսպէս Աշոտ Երկաթ զկնի մահ-

ուան Ամբատայ պատերազմօք և հալածանօք թագաւուը ըեալ յամս քսան և չըրս մեռաւ։ Այս ինքնի Աշխատահանշան ( աշխատահանշան ) ևս կոչեցաւ . այն է թագաւոր թագաւորաց, կամ՝ տիեզերակալ։

Հ. Աղջ կալաւ զթագաւորսթիւն Իազրատունեաց զինի մահուան Աշխատայ Երկաթի :

928 Պ. Արա եղբայր նորա, հաւանութեամբ նոխարարաց օծեալ թագաւոր, եդ զաթոռ իւր 'ի Կարս քաղաքի . և սկսաւ բնաջինջ առնել զթշնամիսն 'ի Հայատանեայց։ Զօքաւ ապա 'ի Դաւին առ նոր վերակացուն, ընդ որ սիրով և խոնարհութեամբ քաղաքավարեալ ետ ազատել զիշխանս՝ կապեալը 'ի բանտի . և զիւովողի կոսն ևս ազատեաց 'ի ձեռաց նորա:

Բազումիք 'ի Հայոց՝ որք աստ և անդ ցիւրեցան սկսեալ էին. լուեալ թէ եղեխաղաղութիւն 'ի Հայատան, դարձարարեալ եկին և պարապեցան յիւրաքանչիւր գործս, ևս և կրօնաւորք ժաղսվեալ գումարեցան և սկսան շնել զվանօրայս, որոց բազմօք ձեռնտու եղել Արան:

936 Յայսմ ժամանակի մեռան Աշխատ և Գագիկ բոնաւոր թագաւորք, և յաջորդեաց Գագիկ Եշտ – Դեւենիկ 'ի Ասապուրական աշխարհի։ Իսկ Արա խաղաղութեամբ թագաւորեալ ձեռն էարկ հրաշալի յօրինուածովք նորոգ կառուցանել 'ի Կարս քաղաքի զկաթուղիկէ եկեղեցի:

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ Բեր արքայ Ավեազաց և Արաց զբդուեալ ընդդէմ Արասայ դիմեաց բազմութեամբ 'ի Հայս եկին էհաս յափն Կուր գետոյ, և այլանօք իմն դեսպանս արձակեալ առ Արաստուկ 'ի Բաէ կամիմ ևս ինքնին գալ առ քեզ և զնորաշէն զեկեղեցիդ հրամայել օծանել օրհնութեամբ ըստ ծիսի Արաց և ոչ Հայոց . . . Ընդ այս բարկացաւ Արա, էաւ զզօրս իւր խաղաց 'ի վերայ Բերայ, երկեցս հարաւ սաստիկս . բայց 'ի վերջոյ յաղթեաց բոլորովին և ձերբակալ արարեալ զԲեր, երեր 'ի Կարս եմայծ 'ի նորաշէն եկեղեցին իւր, և ասէ ' ' Արդաշատասիկ աես զայն եկեղեցին, զօր կամէիր օրհնել-

ըստ ծիսի ձերոյ, լաւ և ուշիմ հայեցալութեամբ զննեամ,  
զի այլ ոչ ևս ունիս տեսանել զառ,,,: Եւ ապա հա-  
նեալ լնա արտաքս ետ բրել զառ նորա:

Իսկ Ավելազք զարհութեալ եկին բաղամ ըն-  
ծայիւք առ Արաս, զիազալութեան ընդ նմա եգեալ  
զուխտ հանդերձ երգմամբ առին և տարան զիուրա-  
ցեալն Ինչը յաջլասըհիւրեանց: Իսյց կարծելով Յու-  
նաց՝ թէ Արաս քամահեալ է զօրհնութիւն ծիսից  
իւրեանց, սկսան ինքեանք ևս արհամարհել զիուրդ-  
հայաստանեայց եկեղեցւոյ սրբոյ:

Արաս զինի մահուան եղորդ իւրոյ իսազաղու-  
թեամբ թագաւորեալ յամն քսան և չըրս վախճանե-  
ցաւ. թողեալ զերկուս որդիս զԱշոտ և զԱյուշեղ:

### ՀԱՅԵ,

Ա. Օլոնչ արժանայիշատակ գործ գործեցաւ յա-  
ւուրս Աշոտ — Դերենիկի ՚ի թագաւորութեան Աս-  
պուրական աշխարհի:

Պ. Աշոտ — Դերենիկի գրգռեալ ՚ի չարախօսու-  
թենէ սմանց ընկց յիշխանութենէ զսպարապետ հօր  
իւրոյ զբացն Ապլիսարիպ Հաւունի: Ինդ այս զայրա-  
ցեալ Ապլիսարիպ զարթոյց ընդդէմ արքայի զիշխանն  
Հերակ և զԱրտանդայ, որ եկն մարտ եղեալ կոտո-  
րեաց զբազումա ՚ի Հոյոց, կալաւ զԱշոտ — Դերե-  
նիկ էարկ ՚ի բանտ. և յամենայն աւուր յելանել իւր  
՚ի զբօսանո տանէր ընդ իւր, որպէս զի ծառայք իւր  
խանդ զնութու առնիցեն ՚ի դաշտի անդ. և ինքն զու-  
արձասցի: Ինդ այս գործ նորա դժուարացեալ առաջ-  
նորդք վահօրէից միաբան նզովեցին զԱպլիսարիպ: Յօր-  
մէ զգասաացեալ սորա ստրացաւ և ջանոյը աղասել  
զԴերենիկի: Մոտի առաքեաց առ նա ՚ի ծածուկ զմի  
ոմն, և խորհուրդ ետ նմա ազատութեան և ասէ.

“ Դ խաղ առնել զքեզ ծառայից իշխանին, ընթա-  
երիվարաւդ դէպ ՚ի ծովը Արմեայ և ևս ապրեցուցից  
զքեզ,,,: Աշոտ Դերենիկ ըստ խրատու Ապլիսարի-  
պայ յելանելն ՚ի դաշտ իրբե վազեաց ՚ի կողմն ծովու

յանկարծ ել Ապլիսարիալ հանդերձ իւրովքն 'ի դա  
բանէ, և կալեալ զառաջս զհետ պնդելոցն զկնի Դիե-  
րենկի, սպան զսմանս 'ի նոցանի. խոկ յորդամ մնա-  
ցեալքն փախստեայ գնացին 'ի Հերք քաղաք. և զդրու-  
նըս փակեցին ընդդէմ նորա. Ապլիսարիալ ցասուցեալ  
զայրացմամբ եհան զսուր իւր և ուժ զնակի եհար լ-  
երկաթի դուռն միսեաց 'ի նմա իշորագոյնս, և դարձ  
արարեալ առ իւրան, էած զԴիերենիկ և թագաւորե-  
ցոյց. արժանի գտեալ և ինքն մեծի իշխանութեան :

'Դ վերայ այսը Ապլիսարիալ երեխ մեծ և անվե-  
հեր քաջութիւն նաեւ ուշիմութիւն. բայց զոյով եշ-  
խեալ 'ի կրից իւրոց ոչ կարեք ընարել զլաւեն յանար-  
գէն: Յորժամ իշխանք միոյ ազգի ոչ կարեն ընտրել  
զարն 'ի բարւոյն և զկիցս անգամ ըստ տեղոյն 'ի  
կիր առնուլ, յայնժամ ազգն այն յայտնապէս է 'ի  
վտանգի կորստեան:

Հ. Ո՞լ յաջորդեաց Ա.բասայ 'ի թագաւորութեան:  
Պ. Ա.զգ մեր նման է տւագոյ, զի բաց յոն միա-  
նալոյ ընդ միմեանս 'ի հնչմանէ հողմաց ևս ցիլուցան  
լինի: 'Դ մեռանիլ Ա.բասայ փոխանակ նստուցանելոյ  
խոկոյն զայլ ոմն թագաւոր 'ի տեղի նորա. բոլըրովին  
բարձի թողի արարին զկառավարսութիւն ազգին: Թաշ-  
նամիքն պատրաստ 'ի չորից կողմանց սկսան արշաւել  
'ի Հայաստան, և զերկիրն աւերել Յայնժմ: Ա.շոտ Գ.  
որդի Ա.բասայ ժողովեաց զարս կորավիս երկու հա-  
զար. և նորօք յարձակեալ յոյլ և այլ տեղիո նուա-  
ճեաց զարշաւանս նոցա. և օր ըստ օրէ բազմացուցեալ  
զզօրս իւր մինչեւ ցքուասուն և հինգ հազար. կացոյց  
սպարապետ 'ի վերայ նոցա զօրդի Գէորգայ իշխանի  
զիշխանն Գոռ անոււն. և սա ևս ժողովեաց զարս քոսան  
և հինգ հազար. և թիք զօրտցն հասանէր մինչեւ ցու թ-  
սուն հազար, որտք արիացեալք զահս պակուցանօղս  
արկին 'ի վերայ մերձակայ թշնամեաց:

952

961

Յետ զինն ամ այսպէս պայազպտելոյ նախա-  
րաբը ժողովեցան առ Անանիա կաթողիկոս և կոչեալ  
անդը զԱ.բքայ Ա.զուանից զՓիլիպպոս և զՅովհան-  
նէս կաթողիկոս նոցա արարին ժողով յԱնի քաղաքի

և օծին անդ զԱշտ թագաւոր Հայոց Խոկ Վաւչեղ  
եղայը Աշտոյ ամբարհաւաճութեամբ գնաց ՚ի Կարս  
քաղաք, և անդ թագաւորեաց ինքնագլուխ Աշտ Գ.  
կափոյց զաշս կամաւ ոռ ՚ի չյարւցանել զնոր խռո-  
վութիւն, քաջ զիտելով զի ազգն՝ որ զինն ամ առանց  
թագաւորի եկաց, և զինքն ոչ ընարեաց թագաւոր,  
առաւել ևս ցանկոյ առանց թագաւորի կեալ ՚ի մէջ  
խովութեան քան թէ Հնազանդիւ միոյ օրինաւոր  
թագաւորի:

Վասն այսորիկ երբ և կամեր ոք յարուցանել  
զապատամբութիւն ՚ի մէջ Հայաստանի, դիւրաւ կա-  
րեր գտանել զհամախոհ ընկերս ՚ի պատրաստի, առ-  
՚ի հիմն ՚ի վեր տապալել զաշխարհն: Աւստի ցորեան  
կրթութիւնն չէ մուծեալ ՚ի մէջ ազգիս անհնարին է  
ասեր Աշտ ջանաւ Հնազանդեցուցանել զամենեսին:  
Քանզի զօրինակս անհաւանութեան իրերաց, անհնա-  
զանդա թեան և զերի անկանելոյ ՚ի ձեռս օտարաց,  
անջրն նկարեալ տեսաներ առ աջի աչաց. և պատճառ  
որսց դներ զխառնուած ազգի իւրոյ: Վանաւանդ երբ  
՚ի միտ բերեր զանօգուտ դիպուածս և զկրեալ նեզու-  
թիւնս հաւուն իւրոյ Աշտոյ Խրկոթի, ամենեին ոչ  
ցանկայը զտհաճութեան ցուցանել զնշան ՚ի վերայ  
Վաւչեղոց:

Այսպէս Վաւչեղ ընդ յորով ամս թագաւորեալ  
՚ի Կարս քաղաքի՝ մեռաւ. և նստաւ ՚ի տեղի նորա  
Աքաս որդի իւթ. սմայ յաջորդեաց Գագիկ՝ որ չար-  
չարեալ ՚ի թշնամեաց յուստհատութեամբ յանձն ա-  
քար Յունաց զգաւառ թագաւորութեան իւրոյ:  
Հ. Զիանդ վարեաց Աշտ Գ. զթագաւորութիւն  
իւր:

Պ. Յոյժ խոհեմութեամբ և բարեպաշտութեամբ  
թագաւորեաց Աշտ Գ. գմեն զործելով ընդ ամենե-  
սին առնել զխապալութիւն: Խոյն Աշտ կառոյց ըզ  
քազում վանօրայս, զեկեղեցիս, զհիւանդանոցս, զաղ-  
քատանոցս և անձամբ անձին ծառայէր հիւանդաց և  
զհնդ մեծ տանէր վասն աղքատաց, մինչեւ բազում ան-  
գամ զնոտս սեղանակիցս իւր առներ, վասն որոյ և

Կոչեցաւ Աշու Աշումանծուն:

Յաւուրս սորա Հայմանտւն սպարապետ Տաճկոց  
ապստամբեցաւ յԵմիրապետէ իւրմէ. և խաղաց պա-  
տերազմաւ 'ի վերայ հայոց : ԵՇ յայնժամ Աշու  
Աղօրմած ընդգէմ նորա և խորատիկեալ զզօրս նորին  
սպան և զնոյն ինքն զառ ամառուն: Բնոդ այս դօրծ սորա  
ուրախ լւալ Ամիրանչախն մեծարեաց զԱշու երեկի  
պարզեք և կրկին լւագիւ անուանելով զնա Շահի  
Արմէն ( ڦ ڦ ڦ ) Աշու պատուք Հայոց :

Աշու զամս քուն և մեց խաղաղասիրութեամբ  
թագաւորեալ ընդարձակեաց և զարդարեաց զթագա-  
ւորութիւն իւր զԱնի արար մայրաքաղաք իւր, նո-  
րոգեաց զպարհուոք նորա և ապա փոխեցաւ ՚ի կենաց  
աստի:

Ամարէս երանելի ամսուին սորա Խոսրովանոյշ  
թագուհի հետեւ ըսլ բարեպաշտութեան առն իւրոյ  
շինեաց զերկու հաջակուոր և զհայակապ մեծ վանսն  
'ի Հաղպատ և ՚ի Ամարէին, որք կան ՚ի շինութեան  
մինչեւ ցայսօր:

### ՏԽՈՉ

Հ. Օխանդ եղեւ վեճաչ Հայաստանի յետ մահ-  
ուան Աշուոյ Գ. և ուլ յաջորդեաց ՚ի թագաւորու-  
թեան:

Պ. Եթող Աշու Գ. զերիս որդիս զԱմբատ, ըզ-  
գագիկ և զՎարսպէն: Անդբանիկն Ամբատ յաջորդեալ  
հօր իւրոյ կոչեցաւ Ամբատ Բ. և զհետ երթեալ 'ի  
հօրէ իւրմէ աւանդեալ խրատուց և կցիւութեանց պա-  
հեաց զՀայաստան ՚ի խաղաղութեան ՚ի բաց վանե-  
լով զհամերէն թշնամիս և վասն ըաղմադիմի քաջու-  
թեանց իւրոց անուանեցաւ Շահիշահ:

Զամս ութն անընդհատ վաստակեալ շինեաց  
զքարձարերձ և զմեծանիստ պարիսպ շուրջ զքարձարան  
Անոյշ: և զարդարեաց զմայրաքաղաքն բազում շքեղ  
շնուածուլք և եկեղեցեք. մինչ զի ասեն թէ թիւ եւ  
կեղեցեաց 'ի նմա եհաս ցհազար և մի:

Այս Ամբատ Բ. հիմն էարկ շինել ղեաթուղի 589  
կե եկեղեցի մեծ ձեռամբ Տքդասաց հայազգի մեծա-  
նուն Ճարտարապետի : ստկայն ոչ կաթաջ տւարտել  
յաւուրս իւր զմյն շինուած :

Ամբատ ոչ կալաց կետը հաստատուն յառաքի-  
նութեան իւրում որպէս սկսաւ . բաղում անդամ յա-  
ջաղութիւն մարդոյ տայ մոռացուցանել զառաքինու-  
թիւնս : Ետես Ամբատ զինքն 'ի յանդութեան , և  
թէ օր ըստօրէ տւաւել քան զառաւել արխացեալ զօ-  
րանայ , յանդգնեցաւ ընդգէմ եկեղեցական օրինաց  
էառ կին զգուստը քեռ իւրոյ , և 'ի մեռանիւ կնոջն  
ինքն ևս հիւանդացեալ մեռաւ 'ի նմին տարւոջ թա-  
գաւորեալ տամ տանն և երկու : (Յաւուր միում ոյն  
Ամբատ թարց Ճշմարիտ քննելոյ ետ սպանանել զայր  
ոմն խելագար և հրամայեաց ոչ թաղել զմարմին նու-  
րա : Յորժամ ոմանիք 'ի կրօնաւորաց գտեալ զմարմին  
նարա 'ի գաշտին՝ թաղեցին . Աս վերստին հրամայեաց  
հանել զմարմին թաղեցելոյն 'ի շերմէ . յայնժամ զայ-  
րացեալ կրօնաւորացն գուշակեցին ' ' իւրեան ևս նոյն  
անցք են դիպելոց , , :

Հ. ԱՇ յանըդեաց Ամբատայ Երկրորդի :

Պ. Երկրորդ եղբայր նորա Գագիկ Ա. որ բարե 589  
պաշտութեամբ խոհեմութեամբ քաջութեամբ և մե-  
ծագործութեամբ եղե պանծալի պարծանք տանն Բագ-  
րատունեաց : Յաւուրս սորա բնաւին նուազեալ պա-  
կասեցան թշնամիք ազգի մերայ . վասն զի սա ինչն եղե  
սիրելի իւրայնոց և ահուելի օտարաց : Կայնպէս ամու-  
սին իւր կաարամիտէ թագուհի բարեպատշ և աշխար-  
հաշէն հանդիսացաւ , կատարելով զշինութիւն կաթու-  
զիկ եկեղեցւոյն , զոր հիմն արկեալ էր Ամբատայ  
թագաւորի :

Ամենայն ազգ զհետ օրինաց ընթանայ , և այն-  
պէս գտանիշ զխաղաղութիւն , և բարձրացուցանէ զթա-  
գաւորութիւն նոր 'ի փառս և 'ի զօրութիւն : Գա-  
գիկ Ա. քաջ գիտելով զի այս անհնարին է աղդի մե-  
րայ , նաև գոլով խրատեալ 'ի հօրէ իւրմէ յԱշոտոյ  
երկրորդէ կաթաց միայն զանձն իւր յարմարեցացանել

ընդ բնաւորութեան ազգին, որով թէպետ ոչ լիներ օրինաւոր կառավարութիւն, և ոչ գոյր յոյս աղատութեան յամենայն հարկաց, և ծաղկեցուցանելոյ զազգին ուսմամբ և կըթութեամբ. բայց ինքն սիրելը լիներ ամենեցուն և խաղաղութեամբ կառավարէր զմաաւորս 'ի նոցանէ; և ոչ տայր առիթո շրջակայ թշնամեաց ցուցանել զիւրեանցն գաղանութիւն:

Յառաջներորդ ամի թագաւորութեան սորա կին ոմն մտաթափ ձայն երարձ թէ Ամբատ Ի. ոչ է մեռ ուեալ, այլ կենդանի է, և երկեցաւ ինձ յայսմ գիշերի. Գագիկ սակս գիւրաւ խաղաղացուցանելոյ ըզժողսվուրին հրամայեաց զմարմին Ամբատայ հանել արտաքս 'ի գերեզմանէն, զի ամենեքեան տեսցեն. և ահա այսու կատարեցաւ բան կրօնաւորացն:

Գագիկ Առաջին թագաւորեաց ամենայն յաջուղութեամբ և խոհեմութեամբ զամո երեսուն կաթալ զամենեսեան 'ի խաղաղութեան փոխեցն 'ի կենաց առտի, թողեալ զերկուս որդիս զառաջինն զ Յովհաննէս կոչեցեալն Ամբատ, իսկ զերկսորդն զ Աշոտ:

Հ. Օ լուս երեւելի անցք պատմին վասն Հայոց 'ի ժամանակս թագաւորութեան Գագիկ Առաջնոյ:

